Հովիկ Չարխչյան

ՉԱՐԵՆՑԻ ԿՐԱԿՈՑԸ

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՐԿԱԴԻՐ ԽՈՒՄՀԱՐ

Միլիցիայի բաժանմունքը փողոցի ծայրին էր, մի անշուք շենքում: Շինության ճակատին ինչ-որ ժամանակ երկգլուխ արծվի հարթաքանդակ էր եղել, հետո այն ծածկել էին սվաղով, բայց այնքան անփույթ, որ զննող աչքը հիմա էլ կտեսներ ծեփի տակ զմռսած թռչնի թևերը: Ետևում բակն էր՝ ցածրիկ պարսպով ու մեծ դարպասով: Շքամուտքից դեպի փողոց իջնող կարճ աստիճան կար, որտեղ գիշեր-ցերեկ հերթապահում էին զինվորականները: Ու երբ Չարենցին բերող խումբը հայտնվեց բաժանմունքի մոտ, ջահել ժամապահը դժկամությամբ թարթեց հոգնած աչքերը և ձգվեց՝ սպասելով, թե ինչ պիտի կատարվեր նրանց գալստով: Ընկեր Անդրանիկն անջատվեց խմբից, Չարենցին աստիճաններով վերև բարձրացրեց, ապա շրջվելով դեպի ներքևում հավաքվածները՝ ասաց խստորեն.
- Ներս կգան նրանք, ովքեր դեպքի հետ առնչություն ունեն: Իսկ մյուսները թող ցրվեն:
Զինվորը դուռը ետ հրեց, շենք մտան: Բակունցն իսկույն հետևեց նրանց.
- Ես գործով վկա եմ, թույլ տվեք անցնել:
Սուրեն անունով մի երիտասարդ նույնպես պահանջեց, որ իրեն թողնեն.
- Ես էլ եմ տեսել պատահածը:
Ի վերջո ներս գնացին ևս չորս հոգի, ու դուռը փակվեց: Նախասրահում բոլորին ասացին, որ նստեն ու սպասեն: Չարենցին կանգնեցրին խմբից քիչ հեռու, հանեցին ձեռնաշղթաները, և այդ ժամանակ ուղեկցող միլիցիոները նրան ասաց.
- Այս կողմ եկեք:
Երկար միջանցք էր: Քայլեց, մինչև որ թիկունքից նույն ձայնը կարգադրեց.
- Կանգ առեք:
Աջ թևի դուռը կիսաբաց էր: Վրան մեխված ցուցատախտակին խոշոր տառերով գրված էր. ‚Քրեական բաժին»: Ներս անցան: Առաջ գնալով՝ հերթապահը կրունկներն իրար խփեց ու պատիվ տվեց: Պատուհանի տակ կանգնած համազգեստավորը դանդաղ շրջվեց: Նախ՝ նայեց Չարենցին, ապա՝ մի կողմ դրեց ձեռքի բաժակն ու հոգնաբեկ ձայնով ասաց.
- Զեկուցիր՝ տեսնեմ:
Մինչ հեթապահը կպատմեր, թե ում էր բերել և ինչ էր կատարվել, Չարենցը շուրջն էր զննում: Ընդարձակ սենյակ էր: Դեմ առ դեմ դրված երկու սեղաններ կային, մի քանի աթոռ, ապակե փեղկերով պահարան, մետաղյա կախիչ: Պատին Ձերժինսկու շրջանակված նկարն էր, սեղանին՝ թղթապանակներ, մեծ թանաքաման ու նավթալամպ: Ամեն ինչ այստեղ իր հաստատուն տեղն ուներ, և ամեն ինչից կարծես մի տարօրինակ սառնություն էր փչում: Դրանց տեսքը Չարենցին համակեց նախկին անտարբերությամբ, ու հավանաբար այլևս ոչինչ նրան չգրավեր, եթե շարված իրերի կողքին հանկարծ չհայտնվեր իր ատրճանակը: Հերթապահը զենքը հանձնեց տեսուչին, սա աղմուկով ‚Նագանը» նետեց

սեղանի վրա, և այդ հարվածի ձայնը մի ակնթարթում Չարենցին դուրս բերեց նանիր մտքերի միջից: Մետաղի փայլը սուր նշտարի պես կտրեց այն միակ ջիղը, որից կառչել էր համակերպության պարտադրանքը: Զգաց, թե ինչպես իր հոխորտ հանդգնությունը նորից բացեց անոթի երախը, և կրկին քմահաճության գրգիռների ալիքը պաշարեց սոսկումի նման: Նա անհանգիստ շարժվեց կանգնած տեղում: Համազգեստավոր ավագը դա նկատեց:
- Իմ ազգանունը Դանիելյան է,- ասաց նա՝ ընդհատելով ենթակայի զեկույցն ու դառնալով Չարենցին:- Հիմա մոտեցեք և ձեր գրպանների ամբողջ պարունակությունը դատարկեք այստեղ:
Չարենցն անշտապ դուրս բերեց փամփուշտները, լցրեց սեղանին: Հերթապահը հաշվեց դրանք: 21 հատ էին:
- Ուրիշ ի՞նչ ունեք:
- Ինքներդ նայեք,- ասաց Չարենցը և երկու ձեռքը վեր բարձրացրեց:
- Խուզարկիր նրան,- հրահանգեց տեսուչը:
Միլիցիոները մոտեցավ: Արագ տնտղեց տրորված շալվարի ու բաճկոնի գրպանները, անցավ զոլավոր վերնաշապիկին, հետո արձակել տվեց ծոպավոր գոտին ու նույնիսկ սրածայր կոշիկների մեջ նայեց: Մեկ առ մեկ հանեց, փամփուշտների կողքին շարեց այն ամենն, ինչը ձեռքն ընկավ՝ ծխախոտատուփը, բանալին, ժամացույցը, լուցկին, մի քանի թղթադրամ:
- Դրանք կարող եք ետ վերցնել,- ասաց Դանիելյանը՝ կիտված իրերից իր մոտ պահելով ատրճանակն ու փամփուշտները: Ապա մոտեցավ սեղանին, նստեց ու մի թուղթ առած՝ սկսեց ինչ-որ բան գրել: Մի քանի րոպե նա լուռ գրում էր: Երբ ավարտեց՝ ձեռագիրը մեկնեց Չարենցին.
- Սա խուզարկության արձանագրությունն է: Կարդացեք ու ստորագրեք:
Չարենցն առաջ գնաց, վերցրեց գրությունը, սակայն չկարդաց:
- Ծխել կարո՞ղ եմ,- հարցրեց նա:
- Ծխեք,- չմերժեց Դանիելյանը, ապա դարակից հանեց մոխրամանն ու հրեց առաջ:
Մինչ Չարենցը կնստեր սեղանին մոտ ու կբացեր ծխախոտի տուփը, այդ ընթացքում տեսուչը հաջորդ մաքուր էջը դուրս բերեց թղթապանակից և այնուհետև ասաց.
- Հիմա մի քանի հարցեր կտամ Ձեզ, իսկ Դուք կպատասխանեք:
- Քննի՞չ եք,- հարցրեց Չարենցը:
- Ոչ, Ձեր քննիչը շուտով կլինի: Նրա ետևից ես մարդ կուղարկեմ: Բայց մինչ նրա գալը պիտի կազմեմ նախնական արձանագրությունը: Այնպես որ, ստիպված կլինեք սկզբում ինձ պատասխանել:
- Լավ, հարցրեք,- ասաց Չարենցը: Հետո նա արմունկները հենել էր սեղանին, ծուխը փչում էր ոտքերի տակ ու լսում էր, թե գրի առնելիս տեսուչն ինչպես էր կրկնում իր պատասխանները.
- Չարենց Եղիշե Աբգարի... 29 տարեկան... Ղարսեցի... Ամուսնացած... Գրագետ... Կոմկուսի անդամ 1920 թվից... Պաշտոնավարում է Կենտկոմի մամուլի բաժնում... Դատի տակ չի եղել... Հիմա ինձ ասեք Ձեր կուսակցական տոմսի համարը:

- Չեմ հիշում:
- Ձեր հասցեն:
- Դա էլ չեմ հիշում: Ինչ-որ բան գրեք: Գրեք՝ Տեր-Ղուկասովի փողոց, կամ նման մի բան:
- Այդպես չի լինի,- տեսուչը ափով գրկեց կզակն ու նայեց նրան:
- Իսկ ինչու՞ չի լինի: Ի՞նչ տարբերություն, թե ես որտեղ եմ ապրում: Գրեք՝ բակերում, բուլվարի նստարանների տակ, գինետներում, Ցախի մեյդանի դուքաններում...
Ոչ այն է՝ ներքաշած ծխից, ոչ այն է՝ շունչը խցանող մաղձից բռնկված հազը խլացրեց նրա վերջին բառերը: Մարմինը կքելով ու ափով բերանը ծածկած՝ Չարենցը դեռ երկար ցնցվում էր, իսկ երբ խաղաղվեց, մոխրամանի մեջ տրորեց վառվող քնթուկն ու հարցրեց.
- Գիտե՞ք, թե ով է Սերգեյ Եսենինը:
- Գիտեմ:
- Դա լավ է: Իսկ Ձեզ հայտնի՞ է, որ նրան տասն անգամ բաժին են տարել:
- Դա ի՞նչ կապ ունի,- տեսուչի դեմքը տարակուսանք ու ձանձրույթ էր թորում:
- Ճիշտ եք, ոչ մի կապ չունի,- հանձն առավ այնպես անհապաղ, որ կարծես իր փոխարեն մեկ ուրիշն էր անտեղի շեղել զրույցի ընթացքը:
- Դե, եթե այդպես է, վերադառնանք մեր գործին,- իբրև ամուր ջղերի գերազանցության ապացույց, տեսուչը շշից նոր թանաք ծորացրեց թանաքամանի մեջ:- Այժմ, ընկեր Չարենց, պատմեք, թե ինչպե՞ս պատահեց դեպքը: Ինչու՞ որոշեցիք մահափորձ կատարել քաղաքացուհի Այվազյանի դեմ:
Չարենցը շեշտակի նայեց տեսուչին ու դանդաղ առաջ մղվեց: Այնպես թվաց, թե հիմա շշուկով մի նվիրական գաղտնիք էր վստահելու նրան: Բայց նույն պահին էլ աչքը բևեռեց անորոշ մի կետի ու սկսեց արտասանել.
- Տեսե՞լ եք դուք արդյոք,
Ո՞նց է վազում դաշտով,
Մշուշե լճերում կորած՝
Երկաթե փնչերից փնչալով,
Չուգունե թաթերով գնացքը:
Իսկ նրա ետևից,
Խոտերի միջով,
Ինչպես ձիարշավի տոներին ուրախ,
Ծառսելով ոտները իր չոր՝
Վազում է կարմրաբաշ մի քուռակ...
- Դա Ձե՞ր գրածն է,- հարցրեց Դանիելյանը:
- Ոչ: Եսենինի…
- Վատ չէ: Սակայն ես կուզեի լսել այնպիսի մի բան, որ Ձերը լիներ: Ասենք, օրինակ, խոստովանություն: Կամ բացատրություն: Կամ պատասխան իմ տված հարցերին...
Միայն թե Չարենցն արդեն չէր լսում տեսուչին: Աչքերը կկոցած, թաղված ինքնամոռացման մշուշի մեջ՝ նա սկսեց բռունցքով խփել սեղանի եզրին, և զարկերի հետ վանկատվող նրա խոսքը որքան երկարում, այնքան ավելի մոլեգին ու հատու էր դառնում.
- Նրանց հեշտ է կանգնել՝ շուրթերը

Թիթեղե համբույրով ներկել.
Միայն ինձ է վիճակվել կյանքում
Իմ երկրին ալելու երգել:
Սրանից է, որ աշնան թենին
Գլուխը ցանկապատին տվել՝
Ջախջախվել է կարմիր մորենին,
Իր պտղի արյունով ողողվել...
Լռեց անսպասելի: Աչքերը բացեց, նայեց Դանիելյանին: Ու կարծես հիմա միայն նկատեց իր դիմաց նստած մարդու անքնությունից այտուցված կոպերի գույնը, շուրթերի վրա զսպված հեգնանքը, մտացիր դեմքի ներսում հորանջող հափրանքի հետքը: Հասկացավ, որ այդ հայացքի և ոչ մի մկան չէր երերալու այնքան ժամանակ, քանի դեռ չկար այն բառակույտը, որ նրան էր հարկավոր:
- Լավ, պարզ է,- ասաց Չարենցը:- Եկեք շարունակենք,- ապա հպանցիկ աչք նետեց անկյունում կանգնած, զարմանքով իրեն դիտող միլիցիոների կողմն ու խոսքն առաջ տարավ,- բայց հարցեր պետք չեն: Կասեմ այն, ինչ եղել է: Իսկ դուք գրառեք... Այդպես հարմա՞ր է:
Նա մի նոր ծխախոտ վառեց, գլանակը պտտեց մատների մեջ ու սկսեց անշտապ թելադրել.
- Ես՝ Եղիշե Չարենցս, լինելով լուրջ դրությամբ ու սթափ վիճակում, այսօր երեկոյան գնացել էի Միացյալ ակումբ օպերետա դիտելու: Երկրորդ գործողությունից հետո պատահեցի Մարիանա Այվազյանին, որի հետ ծանոթացել եմ մոտ մի շաբաթ առաջ... Դուք հասցնու՞մ եք գրի առնել, քաղաքացի տեսուչ: Ես կարող եմ ավելի դանդաղ թելադրել... Մի խոսքով, տեսա նրան ու ասացի, որ պիտի իր հետ խոսեմ: Դրանից հետո գնացի տուն, վերցրեցի ՝Նագան՝ տեսակի իմ ատրճանակը՝ հենց դա, որ ձեր սեղանին է, վերցրեցի մոտս եղած բոլոր այդ փամփուշտները, քանի որ որոշել էի ծանոթուհուս՝ Մարիանա Այվազյանին խփել: Վերադարձա ակումբ և սպասեցի, մինչև օպերետան կվերջանար: Երբ նա դուրս եկավ թատրոնից, ես հետևեցի ու բուլվարի մոտ նրա վրա կրակեցի 2 անգամ: Դիպավ, թե ոչ, այդ մեկը ես չգիտեմ: Սա է բոլորը: Ավելին ասել չեմ կարող... Հիմա բավարարվա՞ծ եք:
Տեսուչը գրեց վերջին բառերը, շուռ տվեց էջը և հարցրեց.
- Ակումբում ի՞նչ ասացիք Այվազյանին:
- Առանձնապես ոչ մի լուրջ բան: Ասացի, որ իրեն պիտի սպանեմ:
- Դուք խմա՞ծ եք:
- Չէ, այսօր չեմ խմել:
- Լավ: Այդ դեպքում ինչու՞ կրակեցիք: Ո՞րն էր պատճառը:
- Պատճառ չկար,- ասաց Չարենցը:
Դանիելյանը գրիչը դրեց սեղանին ու ոտքի ելավ: Քայլեց մինչև պատուհանը, ետ եկավ, մի պահ կանգ առավ, կարծես ուզում էր ինչ-որ բան հիշել: Հետո կրկին նստեց, գրիչը վերցրեց ու թեթև թակելով թղթի վրա՝ նայեց Չարենցին.
- Մի տեսակ անլուրջ բան է ստացվում: Հենց այնպես վճռել եք՝ գնալ ու կրակել: Իսկ թե ինչի համար՝ ասել չեք ուզում: Դա, իհարկե, Ձեր կամքն է, վարվեք՝ ինչպես հարմար

կգտնեք: Բայց թաքցնելով արարքի դրդապատճառը՝ Ձեր վիճակը ոչնչով չեք թեթևացնում: Դա գոնե հասկանու՞մ եք...
- Ես հասկանում եմ: Բայց ստիպելու կարիք չկա: Միևնույն է, ավելին չեմ ասելու:
- Եթե այդպես է, ուրեմն ես այլևս հարցեր չունեմ:- Տեսուչի ձայնում ոչ ափսոսանք կար, ոչ վիատություն: Նույն ձանձրույթն էր, որ հավանաբար եղել էր նաև Չարենցից առաջ ու կմնար նրանից հետո:- Անտեղի ժամանակ չսպանենք: Ստորագրեք այս թղթերն ու վերջացնենք:
Չարենցը վերցրեց իրեն պարզած էջերը: Չկարդաց, արագ ստորագրեց ու վերադարձրեց: Տեսուչն ուղղեց դրանց եզրերը, բացեց դարակը և դրեց այնտեղ: Հետո գլխի շարժումով նշան արեց միլիցիոներին.
- Կասկածյալին կարող ես տանել: Նաև մարդ կուղարկես կամ ինքդ կգնաս քննիչի ետևից: Ու իմացիր՝ կա՞ տեղեկություն տուժածի մասին: Այդ մեկն արագ ճշտիր:
- Լսում եմ,- ասաց հերթապահն ու պատիվ տվեց:
Դանիելյանը ոտքի ելավ, վերցրեց իր կիսատ բաժակը, անցավ, կանգնեց պատուհանի մոտ՝ ճիշտ այն նույն տեղում, որտեղ կանգնած էր, երբ սենյակ մտան: Չարենցը նայեց տեսուչի թիկունքին, ձեռքերը գրպանը դրեց և բացված դռնով դուրս եկավ: Նա հոգնած էր, սաստիկ քնել էր ուզում և արդեն միևնույն էր, թե հիմա որտեղ և ինչու էր գնում:
Միջանցքի մյուս ծայրում սպասող Բակունցը նրանց տեսնելուն պես մոտ վազեց.
- Հը, Եղիշ, ինչպե՞ս ես:
Չարենցը դառը ժպտաց:
- Մի անհանգստացիր,- ասաց Բակունցը,- աղջկա վերքը թեթև է, վտանգ չկա, հենց նոր իմացանք:
Չարենցը գրպանից հանեց բանալին ու պարզեց նրան.
- Մեր տուն կգնաս: Ինձ մաքուր հագուստ ու ծխախոտ բեր:
- Եղավ: Իսկ քեզ ու՞ր են տանում:
- Ժամանակավոր մեկուսարան,- նրա փոխարեն պատասխանեց հերթապահը:
- Կարո՞ղ ենք այնտեղ ուտելիք բերել,- հարցրեց Բակունցը:
- Կարող եք:
Նախամուտքից նրանք ձախ թեքվեցին: Փոքրիկ հարթակից դեպի գետնահարկ տանող աստիճաններ կային:
- Ներքև ենք իջնում,- ասաց ուղեկցողը:
Չարենցն առաջ ընկավ: Բակունցը մնաց:
Հետո կրկին միջանցք էր՝ ճիշտ նրա նման, ինչ կար վերին հարկում: Կալանատան վերակացուն, որ հավանաբար հենց նոր էր զարթնել մոտեցող ոտնաձայներից, ընդառաջ եկավ նրանց, վարժ շարժումով բացեց երկաթե դռներից մեկը և մի կողմ քաշվեց: Չարենցը ներս մտավ, նույն պահին էլ դուռը ետևից փակեցին, և նա կանգ առավ ծխապատ կիսամութի մեջ՝ փոքր-ինչ անակնկալի եկած իր տեսածից: Մեկուսարան ասվածն իրականում մարդաշատ էր: Պատին ամրացված տախտակամածին խոր քնով քնած էր հաղթանդամ մի տղամարդ, իսկ նրա դիմաց նստած էին ևս երկուսը, որ բանալու ձայնից շրջվել էին և հիմա նույն դիրքով ծխում ու հետևում էին չորսբոլորը տնտղող նորաբնակին:

Մենախուցը մեծ սենյակ էր՝ սպիտակ պատերով ու հողե հատակով: Առաստաղից քիչ ներքև նեղ, ճաղապատ լուսամուտ կար, անկյունում՝ սեղան, որի վրա դրված լամպը վառվում էր:
- Անունդ ի՞նչ է,- վերջապես հարցրեց նա, ով ավելի երիտասարդ էր:
- Եղիշե,- ասաց Չարենցն ու նստեց հարցնողի կողքին:
Նրա խոսքի վրա մյուս կենվորը կտրուկ վեր կացավ, ձեռքը խփեց ծնկին ու բացականչեց.
- Այ քեզ մասխարա բան, այսօր Եղիշներին բռնելու օրն է,- և հանկարծ երկուսն էլ սկսեցին զիլ ձայնով քրքջալ:
Չարենցն ապշած նայեց իր ուրախ բախտակիցներին.
- Ձեզ ի՞նչ պատահեց:
- Տեսնու՞մ ես սրան, որ մեռելի պես քնած է,- խոսեց առաջինը:- Գիտե՞ս ով է:
- Չլինի՞ Անտիոքի դուքսն է կամ Եղիա մարգարեն,- նրանց ծիծաղից սրտնեղած՝ հարցրեց Չարենցը:
- Չէ, ինչ մարգարե: Պարզապես նրա անունն էլ է Եղիշ: Եղիշե Ոսկանյան: Ի՞նչ է, չե՞ս լսել:
- Իսկ ինչու՞ պիտի լսած լինեի:
- Դե, որովհետև նույնիսկ թերթերում գրեցին նրա մասին:
Տարեց կալանավորը տեղում ուղղվեց, մի անգամ էլ նայեց քնածին ու հետո ասաց.
- Լավ, մոտ նստիր՝ պատմեմ: Դրան երեկ բերեցին մեզ մոտ: Մի շաբաթ առաջ բանտից ծլկել էր: Իսկ գիտե՞ս, թե ինչի համար էր նստած: Պարզվում է՝ սա ամուսնացել է 13 անգամ: Դու միայն պատկերացրու՝ 13 անգամ կին է ընտրել, տեղը տեղին խնամախոս է գնացել, հարսանիք է արել: Բայց արի ու տես, որ մտքին ուրիշ բան է եղել: Ամեն անգամ, հենց նույն գիշերը, երբ խեղճ հարսնացուն աչքը ջուր կտրած սրան է սպասել, մեր տնփեսան այդ ժամանակ արագ սրբել է հարսի տան եղած-չեղածը, թալանն առել ու անհետացել է... Հիմա շարունակությունը լսիր: Մի շաբաթ առաջ բանտից փախչում է ու ի՞նչ անի, որ լավ լինի, գիտե՞ս: Նորից գնում է ամուսնանալու: Սա էլ 14: Էլի հարսանիք, քեֆ, ուրախություն, մի խոսքով, ինչպես որ կարգն է: Իսկ հենց մութն ընկնում է, առաջվա պես տան ունեցվածքը լցնում է պարկի մեջ ու թաքուն դուրս է գալիս: Ավարն առած՝ հասնում է կայարան, գնացք է նստում: Ու հենց այդտեղ էլ բռնում են որպես անտոմս ուղևորի: Փաստորեն մեր խեղճ տղան իր վերջին պատառը չի մարսում...
- Սրան նայելիս չէի ասի, թե մարսողության հետ կապված խնդիր ունի:
- Դու պիտի լսեիր, թե ինքն ինչպես էր պատմում գլխին եկածը: Իսկը աստծու գառ...
- Այո, անվանակիցս բացառիկ արհեստի տեր է,- համաձայնեց Չարենցը: Նա գրպանից հանել էր ծխախոտատուփը, որի ներսում երկու գլանակ էր մնացել ու մտածում էր՝ ծխե՞լ, թե՞ չծխել...
- Իսկ հիմա դու պատմիր, թե քեզ ինչ գործի համար են կալանել,- ասաց երիտասարդը:
Չարենցը չպատմեց: Նա այնուամենայնիվ որոշեց ծխել, վառեց ծխախոտը, ապա հենվեց պատին ու լուռ նայում էր գավառական Դոն Ժուանին, որն անխռով մրափել էր, իսկ նրա ոտքի փաթաթանները լիալիր բուրում էին սպանիչ մշտատևությամբ: ‘Կնշանակի՝ դժբախտությունն էլ իր երջանիկին է ունենում՞,- մտածում էր Չարենցը նրա մասին, և այդ նոր մտքից մի աղավաղված քմծիծաղ էր դրոշմվում դեմքին: Ահա այսպես՝ մեկը

պատժվում էր այն բանի համար, որ կանանց հարցում չափն անցել էր, իսկ մեկ ուրիշն էլ՝ այն պատճառով, որ ի զորու չեղավ նույնիսկ մի կնոջ ենթարկել իրեն: Տեսնես՝ լինու՞մ է երկու մեղքերի փոխանակություն: Ինքը հաճույքով կհամաձայներ...
Պատուհան կոչվող խոռոչից մի փշրանք գիշեր ներս էր նայում: Նա էլ երևի անպատճառ տեսնել էր ուզում մինչև խենթություն անվարան քայլող սիրեկանին, ով իր արարքի համար չէր զղջում, թեև ցավում էր…

* * *

Տեսուչ Դանիելյանը Չարենցի մասին մտածելու ցանկություն բոլորովին չուներ: Այն պահից ի վեր, երբ ստորագրված թղթերը դրել էր դարակում, նա նորից ընկղմվել էր հանգստավետ անգործության մեջ: Դա հավանաբար միակ հաճելի բանն էր, որ պարգև էր մնում նրա գիշերային ծառայությունից: Իսկ մնացյալը գլխացավանք էր՝ օրեցօր կրկնվող, դռնից ներս մտնող և նույն դռնով էլ հեռացող անախորժություն: Ինչու՞ պիտի բեռ դարձներ ուրիշի ցավը: Իր ի՞նչ հոգսն էին կռվազան կառապանները, ճարպիկ գողերը, ցնորված պոետները: Իր գործը միայն նրանց լսելն ու փաստաթղթեր կազմելն էր: Իսկ հետո կբացվեր առավոտը, և՝ մնաք բարով, օրինախախտներ: Դուք ու ձեր մեղքը: Ես գնացի...
Դուռը ծեծեցին: Ներս մտավ հսկիչը և զեկուցեց, որ բաժին է եկել տուժածի հայրը:
- Ներս հրավիրիր,- ասաց տեսուչը, համազգեստն ուղղեց և հանեց գործի թղթապանակը:
Սարգիս Այվազյանը գունատ տեսք ուներ: Աթոռը մոտ քաշեց, նստեց սեղանի դիմաց ու տեսուչի դեմքին նայեց այն մարդու դառնությամբ, որին պատժել էին անարդարաբար, իսկ նա այդպես էլ չէր հասկացել, թե բախտն իր հանդեպ ինչու էր հանկարծ այդքան դաժան գտնվել: Շունչն անկանոն էր: Դեպքի վայրից ուղիղ հիվանդանոց էր գնացել, սպասել էր այնքան, մինչև բժիշկն իրեն կհայտներ, որ Մարիանայի կյանքին որևէ վտանգ չի սպառնում, բայց չէր հավատացել նրան, անձամբ մտել էր վիրահատության սենյակը, խոնավ աչքերը թաքցնելով՝ շոյել էր աղջկա մազերն ու միայն դրանից հետո, հնազանդվելով հարազատների հորդորներին, եկել էր այստեղ:
Տեսուչը նրան ջուր առաջարկեց, մեկ առ մեկ նշեց վկայի մասին բոլոր տվյալները և այնուհետև խնդրեց ամեն բան պատմել ըստ կարգի ու հերթականության: Դեռ շփոթված, պատմության ծայրը դժվար գտնելով՝ Այվազյանը սկզբում ինչ-որ կցկտուր բառեր էր քրթմնջում, մինչև որ մտքերը խմբեց և ապա՝ ամբողջ ընթացքում աչքը գրիչին պահած՝ վերհիշեց դեպքն այն պահից, երբ ակումբի մոտ Մարիանան իրեն թևանցուկ արեց.
- Այդպես քայլում էինք: Բուլվարի միջով տուն էինք գնում: Ըստ երևույթին այդ ժամանակ էր, որ դուստրս նկատեց Չարենցին: Նա խիստ վախեցավ ու ռուսերենով (տանը նրա հետ ռուսերեն ենք խոսում) ինձ ասաց. ‘Պապա, էլի այդ խուլիգանն է’: Այսինքն՝ Չարենցը: Ես խորհուրդ տվեցի, որ ուշադրություն չդարձնի, և շարունակեցինք մեր ճանապարհը: Բայց աղջիկս նորից ետ նայեց և ասաց. ‘Կարծես նա մեր ետևից է գալիս’: Ես՝ չդարձնելով երեսս, հանգստացրի նրան՝ ասելով, թե վախենալու կամ այդ մասին մտածելու կարիք չկա, մանավանդ որ արդեն տուն էինք հասնում: Զինկոոպի ճաշարանի դիմացի ալեյայով անցնելու միջոցին էլ հենց ատրճանակի 2 կրակոց լսեցի: Շրջվեցի ու տեսա իմ դիմաց՝ մոտ երկու քայլ հեռավորության վրա կանգնած Չարենցին: Ատրճանակը ձեռքին էր: Քանի որ

աղջիկս ոչ մի ձայն չհանեց, ես նույնիսկ չկասկածեցի, թե նա կարող է վիրավորված լինել: Թողեցի նրան և անմիջապես մի ձեռքով բռնեցի Չարենցի կոկորդից...
Տեսուչն ընդհատեց նրան.
- Ասացեք, խնդրեմ, մինչև այդ դեպքը Դուք որևէ բան գիտեի՞ք Չարենցի և Ձեր դստեր հարաբերությունների մասին:
- Այո, գիտեի: Հավանաբար մի երկու օր առաջ էր, տանը աղջիկս մեզ պատմեց, որ ինքը պատահաբար ծանոթացել է քաղաքացի Չարենցի հետ: Հիշում եմ, որ նա նույնիսկ մեզնից հարցրեց՝ հարկ կա՞ պատասխանել Չարենցի բարևներին, թե ոչ: Ես այն ժամանակ նրան խորհուրդ տվեցի քաղաքավարությունից դրդված՝ պատասխանել: Գիտեմ նաև, որ Չարենցը, պատահելով Մարիանային, ցանկություն էր հայտնել նրա հետ ծանոթանալ, բայց դուստրս չէր կամեցել, և ծանոթությունը փաստորեն պատահական էր ստացվել: Ես հիվանդանոցում միայն իմացա (աղջիկս ասաց), որ Չարենցն այսօր նրան առաջարկել է դառնալ իր կինը և մերժում է ստացել...
Սարգիս Այվազյանը խորը շունչ քաշեց ու դարձյալ ջուր խնդրեց: Նա վատ էր զգում: Այտերին կարմիր բծեր էին հայտնվել, ճակատը քրտնել էր, ձայնը սաստիկ հուզմունքից դողում էր: Դանիելյանը դա նկատեց: Նա մի երկու հարց էլ տվեց, իսկ հետո գրիչը ցած դրեց ու ասաց.
- Այսքանը բավական է: Եթե որևէ կարևոր բան չունեք ավելացնելու, կարող եք գնալ:
- Շնորհակալ եմ,- ասաց Այվազյանը և մնաց նստած: Նա կուզեր վայրկյան առաջ դուրս ելնել այդ շենքից, բայց նրան թվաց, թե մտքերը ձորձերի նման փաթաթվել էին ինչ-որ փշերի ու ետ էին ձգվում: Միգուցե շտապու՞մ էր անտեղի, միգուցե մոռացա՞վ էական մի բան, որ պարտավոր էր ասել: Կամ գուցե պետք չէ՞ր պատմել այն մասին, ինչ կատարվել էր տանը... Նա դեռ չէր հաշտվում այն մտքի հետ, որ կարող էր այդքան անհեթեթորեն փորձանքի մեջ ընկնել, և այդ անհաշտությունը մահու չափ անախորժ էր նրա համար: Վերջապես Այվազյանը պոկվեց վարանման կպչուն քիստերից, վեր կացավ ու անվստահ քայլերով լքեց սենյակը: Երբ դուռը փակվեց, Դանիելյանը թղթերը խցկեց դարակում և գնաց, կանգնեց պատուհանի մոտ: ‘Տեսնես՝ քննիչն ինչու՞ ուշացավ’,- փողոցին նայելով մտմտում էր նա ու սրտնեղում գիշերվա ամայությունից:
Իսկ քննիչն արդեն ճանապարհին էր:
Երևանի առաջին շրջանի ժողքննիչ Գրո Գրիգորյանը Չարենցին վաղուց գիտեր: Եվ երբ կեսգիշերին հանձնակատարը՝ նույն ինքը՝ ընկեր Անդրանիկը, ծեծեց նրա տան դուռը, քնից արթնացրեց ու հայտնեց, թե Չարենցն իրենց մոտ է, Գրիգորյանը ոչ այնքան զարմացավ, որքան բարկացավ տարաժամ ապսպրած տհաճությունից:
- Սա ի՞նչ բան է,- քրթմնջում էր նա՝ կապելով կոշիկի քուղերը,- մարդ գիշերն էլ հանգիստ չունի...
Արդեն փողոցում միլիցիոները սկսեց պատմել, թե դեպքն ինչպես էր եղել: Գրիգորյանը լսում էր ու չէր ընդհատում նրան: Միայն այն պահին, երբ տեղեկացավ, որ բաժնում Չարենցին հարցաքննել են, հարցրեց.
- Իսկ Դանիելյանի մոտ Չարենցն իրեն ինչպե՞ս էր պահում:
- Հանգիստ: Նստել էր ու արտասանում էր:

- Արտասանու՞մ էր:
- Հա: Դանիելյանը հարցեր էր տալիս, իսկ նա պատասխանում էր ոտանավորներ արտասանելով:
- Դա արդեն լավ չէ,- ինքն իրեն ասաց Գրոն ու քայլերն արագացրեց:
Տեղ հասնելուն պես նա տեսուչից վերցրեց բոլոր թղթերը, կարդաց, ինչ-որ բան նշեց իր մոտ, հետո մի մաքուր էջ դնելով փակված թղթապանակի վրա՝ սկսեց գրել.
«Որոշում
1926թ. սեպտեմբերի 6-ին, Երևան:
Ես՝ Երևանի 1-ին ռայոնի ժողքննիչ Գրո Գրիգորյանս, ստանալով Երքաղաքի պատհերթապահից ս. թ. 05.09 բանավոր տեղեկություն, քաղ. Եղիշե Չարենցի կողմից քաղ-ուհի Մարիանա Այվազյանի կյանքի դեմ մահափորձ կատարելու մասին և ի նկատի ունենալով, որ վերոհիշյալ գործում կա քր. օր. 14- 142 հոդ. հոդ. նախատեսված հանցագործության նշավակներ, որը ընդդատյա է Գլխավոր դատարանին, ղեկավարվելով քր. դատ. օր. 26 և 110 հր. հոդ., որոշեցի՝
սույն գործով անցնել նախնական քննության կատարման: Սույն որոշման պատճենը ուղարկել դատախազության բաժնին ի գիտություն»:
Նա ստորագրեց վերջին տողի տակ, ապա կարգադրեց իր մոտ բերել Չարենցին:
Հերթապահն իսկույն դուրս եկավ սենյակից, իսկ Գրոն շրջվեց, հեգնոտ հայացքով նայեց ձանձրացող տեսուչին ու հարցրեց.
- Ասում ես՝ Չարենցն ի՞նչ էր արտասանում:
- Սերգեյ Եսենին:
- Իսկ ինչու՞ գործում այդ մասին ոչ մի տող չկա:
Տեսուչը դրան չէր սպասում:
- Մտածեցի, որ ավելորդ է,- շփոթված ձայնով ասաց նա ու առաջ եկավ:
- Ճիշտ ես մտածել,- Գրիգորյանը ձեռքի շարժումով կանխեց նրան:- Բայց ոչ թե գրելն էր ավելորդ, այլ հանդուրժելը, որ այստեղ մտնող ամեն մեկը քեզ ձեռք առնի ու քթիցդ բռնած՝ ման ածի: Համենայն դեպս, ինձ հետ նման բան հազիվ թե պատահեր...
Նա վեր կացավ, մի պտույտ տվեց սեղանի շուրջն ու նորից նստեց.
- Իսկ հիմա նայիր, թե հարցաքննելն ինչպես է լինում:
Շատ չանցած՝ Չարենցին ներս բերեցին: Պետք էր կույր լինել՝ չնկատելու համար, որ նա եփվում էր կատաղությունից: Նույնիսկ տեսուչի փոխարեն մեկ ուրիշին տեսնելը սառը ջուր չլցրեց նրա զայրույթի վրա: Առանց հրավերի քաշեց աթոռը, նստեց ու մի կարճ հազով կոկորդը մաքրելուց հետո դիմեց քննիչին.
- Ինչու՞ եք կանչել: Ես արդեն պատասխանել եմ բոլոր հարցերին:
Գրոն նույնիսկ չնայեց նրան: Չնացնելով, թե անչափ կարևոր մի բան է փնտրում, նա հերթով բացեց բոլոր դարակները, շարժեց սեղանի իրերը, անկանոն թափված թղթերի կույտը մի անկյունից մյուսը հրեց, ապա՝ իր նեղ ճակատի վրա մտազբաղության կնճիռներ գծելով՝ մեկ անգամ էլ կրկնեց նույն ծիսակարգն այն համառությամբ, որից անմշակ կամակորության քրտինք էր քամվում: Եվ Չարենցը հանկարծ սկսեց խղճալ քննիչին: Այդ մարդը, որն իրենից ծածուկ թուքն էր կուլ տալիս, այս ու այն կողմ էր մեկնում անհանգիստ

ձեռքերը, դժգոհ էր աշխարհից նրա համար, որ արթնացել էր գիշերվա կեսին ու գործատեղ հասել, հիմա ուզում էր դրության տերը լինել, ուզում էր ձգել կեղծ միջարարն այնքան, որքան ինքնաբավության հունդը ջրելու կարիքն էր հարկադրում, որքան դրդում էր սեփական կամքի գերակայությունն ապացուցելու ջիղը: Ու Չարենցի բարկությունը հետզհետե ետ էր նահանջում՝ հրապուրված այդ նոր խաղով, պատրաստ կուլ տալու նրա թմրեցնող հաբերը, արձակելու մրցակցումից գայթակղված գրգիռների կապանքը:
Վերջապես քննիչը հայացքը բարձրացրեց: Կարծես նոր միայն նկատեց Չարենցին, նրա ձայնի ալիքները նոր միայն տեղ հասան, և այժմ արդեն կարող էր ուսուցչի բարեհոգությամբ արձագանքել իրեն ուղղված հարցումին:
- Դուք, ընկեր Չարենց, կարևոր մի բան հաշվի չեք առնում,- խոսեց նա՝ ընտրելով ամեն մի բառը:- Ես Ձեզ կհիշեցնեմ: Մենք մեղավոր չենք, որ Դուք այստեղ եք: Դուք կասկածյալ եք, հետևաբար, եթե հարկ լինի, կկանչենք այնքան անգամ, որքան անհրաժեշտ կհամարենք, և օրվա այն բոլոր ժամերին, երբ ինքներս կցանկանանք:
Տպավորության ակնկալիքով Գրոն մի պահ լռեց, սակայն չտեսնելով հուսադրող նշաններ՝ առաջ անցավ.
- Իսկ հիմա զսպեք Ձեր հույզերը, հանգստացեք և պատասխանեք հարցերիս: Նախ՝ ինձ ասեք, թե այսօր ողջ օրը որտե՞ղ եք եղել և ինչո՞վ եք զբաղվել:
Չարենցը ժպտաց: ‘Այ թե վրիպեց’,- մտածեց նա՝ ցրված հայացքը դարձնելով դեպի դուռը, իսկ հետո նայելով ուղիղ Գրոյի աչքերի մեջ:
- Առավոտյան ժամը 11-ից մինչև երեկոյան ժամը 7-ը ես եղել եմ համալսարանի դիմացի այգում ընկեր Աշոտ Հովհաննիսյանի և նրա կնոջ հետ,- ասաց ու սպասեց հետևանքին:
Կենտկոմի քարտուղարի անունը լսելով՝ քննիչը փոքր-ինչ կքվեց սեղանի վրա, կոկորդում շարժվող ադամախնձորը վերստին թուքը դեպի ներս հրեց, բայց նա կանգ չառավ, հապճեպ գրառեց Չարենցի պատասխանը և շարունակեց.
- Իսկ հետո՞ ինչ արեցիք:
- Հետո արել եմ այն, ինչի մասին արդեն պատմել եմ: Եթե դա Ձեզ նորից է պետք, կարող եք ամբողջը նույնությամբ արտագրել:
- Շնորհակալ եմ խորհրդի համար,- հեգնանքը չթաքցրեց Գրոն ու ձեռքն առավ նախկին արձանագրությունը:- Միայն թե այստեղ որոշ հարցերի պատասխանները ես դեռ չեմ գտել: Օրինակ, Ձեր ցուցմունքում ասված չէ, թե ինչ եք խոսել Մարիանա Այվազյանի հետ:
- Թե ինչ խոսեցի՝ հրաժարվում եմ հայտնել:
- Լավ: Այդ դեպքում գուցե կասե՞ք, թե ինչ նպատակով էիք վերցրել ատրճանակը:
- Մի՞թե պարզ չէ: Որոշել էի գնալ և սպանել նրան:
- Սպանե՞լ,- քննիչը մեկ անգամ էլ այդ բառը կրկնեց:- Եվ ո՞րն էր պատճառը:
- Դա նույնպես հրաժարվում եմ ասել: Բայց պնդում եմ, որ անպայման այս մեկը գրեք. կանխամտածված ձևով նպատակ ունեի Մարիանա Այվազյանին սպանել:
Քննիչը գրեց, ապա գրիչը ներքև դրեց ու վեր կացավ.
- Ընկեր Չարենց, ես նկատում եմ, որ Դուք միտումնավոր կերպով բարդացնում եք Ձեր կացությունը,- ասաց նա՝ հենվելով աթոռի թիկնակին:- Դա ինձ համար հասկանալի չէ: Իսկ գուցե խմա՞ծ եք...

- Արդեն ասել եմ, որ այսօր ոչ մի տեղ և ոչ մի բաժակ չեմ խմել:
- Ուրեմն ինչու՞ էիք ուզում նրան սպանել:
- Ես կրկին անգամ հրաժարվում եմ հայտնել պատճառը: Եվ, ընդհանրապես, այլևս որևէ հարցի չեմ պատասխանելու:
Չարենցը սեղմեց ատամները, և հուսահատ դեմքն աղճատվեց ճմռթված թղթի նման: Նա հոգնած էր, ջղերը տեղի էին տալիս, իսկ խաղն անհետաքրքիր էր դարձել:
- Կարգադրեք՝ թող ինձ ետ տանեն,- ասաց նա համարյա շշուկով ու գլուխը խոնարհեց կրծքին:
Քննիչ Գրիգորյանը նստեց: Հոտառությունը դավել էր նրան: Տհաճ լռության մեջ նա հիմա անվնաս ելք էր որոնում՝ խուսափելով նայել տեսուչի կողմը: Ապա որոշեց Դանիելյանին տուն ուղարկել՝ ասելով, թե կմնա նրա փոխարեն, քանի որ արդեն եկել էր: Հետո միայն գրիչը ձեռքն առավ, ավարտեց արձանագրությունը, պարզեց ստորագրելու, և թղթերը Չարենցից ետ վերցնելով՝ կարգադրեց հերթապահին.
- Կարող ես տանել...
Մեկուսարանի երկաթե դուռն աղմուկով ետ գնաց: Չարենցը ներս մտավ այն եկվորի նման, ով տեղ հասնելուն պես մտածում է. ‘Իսկ հետո՞ ինչ եմ անելու՝’: Բայց դադար առնելու միջոց չկար: Մյուս երկուսը դեռ արթուն էին: Կասկած չուներ, որ իրեն էին սպասել: Չէ, նրանց հետ չէր նստի: Մեկ անգամ ևս հարցաքննվելու ցանկություն չուներ: Լուռ առաջացավ, պառկեց ազատ տախտակամածին, դեմքը դարձրեց դեպի պատն ու աչքերը փակեց: Թող կարծեն, իբր քնել է ուզում: Ու մի՞թե չէր կարող լինել անզգայության այդ կարճ արբեցումը, նվաղման շնորհը, ստորադասության ընծայաբերումը: Չէ՞ որ ահա մեկ ուրիշը՝ այն երկրորդ Եղիշեն, վաղուց խաղաղ մրափում էր, և մեղքը նրան արթուն չէր պահում իր զոջումի հետ:
Քիչ անց նա լսեց, թե խցի հուսախաբված կենվորներն ինչպես վեր կացան և դժգոհ իրենց անկյունը գնացին: Միառժամանակ չոր տախտակների ճռինչը մատնում էր շուռումուռ եկող նրանց մարմինների գժտությունն անհարմարության հետ: Իսկ հետո լռություն իջավ: Սակայն քնելն անհնար էր: Չարենցը պառկել էր, դեմքին զգում էր պատերից փչող սառնությունը, և այժմ այդ կղզիացած աշխարհը բնավ էլ նրան օտար ու անծանոթ չէր թվում, ինչպես սկզբնապես: Դեռ ավելին՝ ասես ինքն ամբողջ կյանքում այստեղ էր ապրել, ու սա էր եղել իր միակ տունը, իր գործած մեղքերի միակ ապաստանը, իր պարտասուն մարմնի մեկուսարանը, որ նույնիսկ նման չէր ապաշխարության խցի, որտեղ բարեպաշտ խոստովանահոր շնչառությունը պիտի նրան ազատեր եղծված երկվության կաշկանդումներից: Չէ, եղածն ընդամենը բանտ էր: Զնդան: Պատժատեղ: Եվ ինչու՞ չկային երկաթե շղթաները, որ գամեին քարակոփ միջնորմներին: Որտե՞ղ էին դրանց բիրտ ձեռնակապերը՝ ճանկելու համար դաստակներն այնպես, որ ափերը չշոշափեին նոսրացած օդի թեթևությունը: Ու՞ր էին այն քաղցած առնետները, որ կրծոտում են մեղսավորների գարշապարը, բրդոտ թաթերով շոշափում են նրանց պաղած մարմինը՝ սուր կեռիկները խրելով այնտեղ, ուր սարսափն արդեն մաշկն էր տրոհել: Վերջապես, որտե՞ղ էր ինքը, ի՞նչ երազի մեջ էր, և ե՞րբ էր դա սպառվելու՝ թողնելով ընդհատված մղձավանջի տիղմը, անձկության փոշին ու հիշողության անցողիկ ծուխը... Չարենցը հիմա

զգում էր իրեն արթնացողի պես, որ նախ նայում և միայն հետո էր տեսնում եղածը: Պետք էր սթափվել, պետք էր ուշքի գալ, որ պատասխան գտներ հարցերին, թե ի՞նչ պատահեց, ինչպե՞ս պատահեց, ինչու՞ պատահեց... Մաղձը, կարոտը, ցավն ու թախիծը, կիրքն ու կսկիծը, սարսափն ու մութը, բոլորը հավաքվել էին մեկտեղ, կուտակվել էին դաղրած մարմնի մեջ, նրա ճնշված սրտում, հոգու անթափանց անոթի ներսում, շաղախվել էին իրար, մերձեցել ու կցվել, և այդ երամն այլևս անհնազանդ էր մտքին, անհաղորդ էր ու խորթ: Գուցե իր ներսում դևե՞ր էին նստած, գուցե ինքն արդեն ցնորվե՞լ էր, դարձել էր մոլագա՞ր: Այլապես ի՞նչ անուն գտներ նրա համար, ով չէր զլանում կյանքը վերածել միևնույն մեղքի անվերջ կրկնության: Ինչպե՞ս կոչեր այն խենթին, որ տարփանքը սիրո տեղ էր ընդունել, որ սեփական կամքը դարձրել էր սառցակտոր ու նետել ցանկասիրության արևի տակ...

Օրն ավարտ չուներ: Կիսաբաց աչքերով Չարենցը նայում էր առաստաղի սև անկյուններին և մտածում էր, որ եթե ինքն անարդար էր, ապա որտե՞ղ էր հատուցման շեմը, ի՞նչ տեսք ուներ այն: Ու մինչ նա հոսող ժամերի սարսուռն էր կոծկում նրանով, ինչը երեկ հույս էր կոչվել, իսկ այսօր սոսկ զրկվածի վերջին մխիթարությունն էր, նույն այդ ժամանակ առաստաղից վեր՝ քրեական բաժնի սենյակում ձեռքերը թիկունքին խաչած՝ ետուառաջ էր անում քննիչ Գրոն՝ աչքը հատակի գունաթափ տախտակներին: Ի վերջո, մի մեծ պտույտից հետո նա նստեց սեղանի մոտ, հերթական մաքուր թուղթը դուրս բերեց և գրչածայրը թանաքամանի եզրին քսելով՝ սկսեց գրել.

«1926թ. սեպտեմբերի 5-ին ես՝ Երևանի 1-ին ռայոնի ժողքննիչ Գրո Գրիգորյանս, վերանայելով իմ վարույթի տակ գտնվող հմ. 71-26 թ. գործը՝ Եղիշե Չարենցի կողմից քաղ-ուհի Մարիանա Այվազյանի կյանքի դեմ մահափորձ կատարելու մասին քր. օր. 14-142 հ. և ի նկատի ունենալով, որ սույն գործով հարկավոր է կատարել մի շարք գործողություններ, պարզաբանելու մի քանի հանգամանքներ, և սույն գործով կասկածելի Եղիշե Չարենցի ազատ մնալը կարող է ազդել գործի հետագա ընթացքի վրա, ուստի ղեկավարվելով քր. դատ. օր. 145 հոդվածով, որոշեցի՝

Սույն գործով կասկածելի Եղիշե Չարենցի դեմ իբրև կանխարգել միջոց ընտրել կալանք Երքաղգավմիլիցիայի կալանատանը…»:

Պատուհանի տակ մի ծածկասայլ անցավ՝ ցնցվելով ու ճռնչալով սալահատակի քարերի վրա: Գրոն դուրս նայեց: Նախալուսաբացի երկինքն անքնությունից դեղնած դեմքի էր նման:

* * *

Մի տարի էլ չէր անցել այն օրից, երբ երիտասարդ գրող Մկրտիչ Արմենը Լենինականից տեղափոխվել ու հաստատվել էր Երևանում, բայց այդ կարճ ընթացքում նա արդեն աշխատանք էր ձեռք բերել, տպագրել էր իր առաջին ժողովածուն, դարձել էր՝Նոյեմբեր՝ միության անդամ ու նույնիսկ գլխի վրա տանիք ուներ: Եվ այդ բոլորը մի մարդու՝ Չարենցի շնորհիվ: Չարենցն էր, որ նրան ստիպեց մայրաքաղաք գալ, գործի ընդունեց Ստյոպա Մանուկյանի մոտ, իսկ հետո էլ այս կացարանի հարցը գլուխ բերեց, որտեղ հիմա Արմենն ապրում էր երկու իր հասակակից տղաների՝ տպարանի բանվորներ Վահան Գրիգորյանի

ու Վահան Հովսեփյանի հետ: Ճիշտ է, բնակարան կոչվածն իրականում քաղաքի կենտրոնում գտնվող Պիոներտան սենյակներից մեկն էր, բայց մի՞թե նա պիտի դրանից դժգոհ լիներ, երբ այդօրինակ պատեհությունը շատերի նախանձը կշարժեր:
Այն չարաբաստիկ գիշերը նա Վահանների հետ դեռ նոր էր տուն հասել ու արդեն պատրաստվում էր անկողին մտնել, երբ հյուրանոցի կողմից երկու կրակոց լսեց: Անմիջապես տեղից վեր ցատկեց, մոտեցավ պատուհանին ու հանկարծ ասաց ինքնաբերաբար.
- Սա Չարենցի կրակոցն է:
Ինչու՞ նա պիտի այդ բանն ասեր: Ինչու՞ հատկապես Չարենցի անունը պոկվեց շուրթերից, այդ ի՞նչ հրաշք կռահում էր, որ՝ բացատրություն չուներ, բայց և չէր կարող հենց այնպես՝ ոչնչից սերվել: Հետո Արմենը պիտի դեռ երկար չարչարեր իր միտքը՝ գիտակցելու համար, թե այդ ի՞նչ կանխասացություն էր, կամ պատահմունքն արդյոք կարո՞ղ էր լինել այդպիսին: Բայց այն ժամանակ զարմանքի ծիրը գտնելու պահը չէր: Ու նա փողոց նետվեց: Չարենցին տեսավ, երբ բազմությունն արդեն շրջապատել էր նրան: Իրարանցման մեջ մարդկանց կցկտուր պատմություններից փորձեց հասկանալ, թե ինչ էր կատարվել: Իսկ երբ բոլորը շարժվեցին դեպի միլիցիայի բաժանմունք, ինքն էլ միացավ թափորին: Ներս մտնել նրան այդպես էլ չհաջողվեց, թեև երկար համառում ու խնդրում էր, որ թույլ տան գոնե միջանցքում սպասել: Ստիպված մյուսների հետ փողոցում կանգնեց այնքան ժամանակ, մինչև որ Բակունցը դուրս եկավ, նկատեց նրան և մոտենալով՝ ասաց.
- Տուն գնա: Այստեղ մնալն անիմաստ է: Բայց առավոտյան անպայման արի:
Ետ դարձավ փշրված սրտով: Ընկերները դեռ չէին քնել, իրեն էին սպասում: Պատմեց այն ամենն, ինչ տեսել ու լսել էր: Հետո պառկեցին ու լույսը մարեցին: Բայց քիչ անց նա վեր կացավ, վառեց նավթի ճրագն ու նստեց սեղանի մոտ: Քնել չէր կարող: Ներսում մի անանուն խռովք կար, սիրտ պարպելու անդիմադրելի պահանջ: Գրիչը ձեռքն առավ, և մինչ բառերը կհաջորդեին մեկը մյուսին, նա մտածում էր. «Ի՞նչ եմ գրում, ի՞նչ է սա: Չափածո նամա՞կ է Չարենցին, կրտսեր ընկերոջ սփոփա՞նք, վշտակցությու՞ն է, երբ ուրիշ ոչինչ չունես, որ փոխես իրերի կարգը կամ պատվար դարձնես հոգուն անհոժար ընթացքի առաջ»:
Երկար նստեց: Դժվար էր գրվում: Փոխնիփոխ եկող ու տողաշար դարձող խոսքերը նրան թվում էին թերի, մտքերը՝ սրտի արձագանքին խորթ, հույզը՝ պարզունակ: Ավարտելուն պես բանաստեղծությունն արտագրեց մեկ ուրիշ թղթի վրա, ապա զգուշորեն ծալեց, դրեց գրպանում: Իսկ առավոտյան, երբ տնից դուրս եկավ, քաղաքը միայն Չարենցի կրակոցի մասին էր խոսում: Դեպքն արտառոց էր, և լուրը տարածվել էր կայծակի արագությամբ: Ոմանք ափսոսանքով ու ցավով էին այդ մասին պատմում, ոմանց համար էլ պատահածը սոսկ ձանձրույթի քաղցը մեղմելու սնունդ էր:
Արմենն ուղիղ բաժանմունք գնաց: Բակը վերստին մարդաշատ էր: Ծանոթների բարևն առնելով՝ մոտեցավ շենքի նախամուտքին ու տեսավ Բակունցին, որն արդեն մենակ չէր: Եկել էին նաև մյուս տղաները, և հիմա ընկերներով խմբված ցածրաձայն ինչ-որ բան էին խոսում: Զրույցից կռահեց, որ դեռևս հուսադրող ոչինչ չկար: Նրանց անորոշ սպասման

վիճակից միայն Մահարին էր դժգոհ, որ անհանգիստ պտույտ էր գալիս տեղում ու շարունակ կրկնում էր, թե պետք չէ ձեռքերն այդպես ծալած կանգնել ու նայել:
- Իսկ ի՞նչ անել,- հարցրեց ակամա:
Բակունցը թևատակին դրած փաթեթը պարզեց Արմենին.
- Սա պահիր մոտդ ու այստեղ սպասիր: Հիմա ուր որ է՝ ինձ կկանչեն հարցաքննության:
- Չարենցին տեսնել կարո՞ղ ենք:
- Դեռ չգիտեմ: Բայց կփորձեմ այդ հարցը լուծել:
Քիչ անց իսկապես հայտնվեց հերթապահը և Բակունցին առաջնորդեց քննիչի սենյակ: Գրո Գրիգորյանը նրան ընդունեց հանգիստ լրջությամբ: Մինչ կլրացներ էջի առաջին տողերը, նրա ռնգային կարկամ ձայնը եռանդի ոչ մի նշույլ չէր դրսևորում: Իսկ հետո, երբ անցան բուն նյութին, Գրոն միանգամից վերափոխվեց ու, բծախնդրորեն ընտրելով յուրաքանչյուր բառը, հարցրեց.
- Ընկեր Բակունց, որքան ես գիտեմ, Դուք և Չարենցը մտերիմներ եք: Ասեք, խնդրեմ, Ձեզ ի՞նչ էր հայտնի նրա և Մարիանա Այվազյանի հարաբերությունների մասին:
- Ըստ էության՝ ոչինչ:- Բակունցն անվստահ պրպտեց միտքը:- Համարյա ոչինչ: Միայն սրանից մոտ երկու շաբաթ առաջ Չարենցն ինձ ասել էր, որ ինքը սիրահարվել է ինչ-որ աղջկա: Ես ենթադրում եմ, որ նա այդ աղջկան սիրահարված պիտի լիներ արդեն մեկ ամիս, որովհետև շուրջ մեկ ամիս է, ինչ անընդհատ խմում է: Հարբած ժամանակ նա միշտ ասում էր, թե հոգնել է այս կյանքից, որ իրեն պիտի խփի, զանազան հայհոյանքներ էր տալիս, դժգոհում էր շրջապատից, Երևանից և նման բաներ: Ես նույնիսկ չգիտեմ, այս ասածներս որևէ առնչություն ունե՞ն գիշերվա պատմության հետ...
- Ամեն ինչ ճիշտ է,- շտապեց հուսադրել քննիչը և իսկույն էլ շարունակեց:- Իսկ հիմա ասեք, թե ինչպե՞ս եղավ, որ դեպքի պահին հատկապես Դուք բուլվարում հանդիպեցիք նրանց:
- Դա ընդամենը պատահմունք էր, ուրիշ ոչինչ: Երևի արդեն գիշերվա ժամը 12-ը կլիներ, երբ ես դուրս եկա Բանկոոպի ճաշարանից: Տուն էի գնում: Ու հանկարծ բուլվարում պատահեցի Չարենցին: Մինչև այդ երեք անգամ գնացել էի նրա բնակարանը, սակայն այդպես էլ չէի հանդիպել: Այնպես որ, ինձ համար էլ անակնկալ էր նրան տեսնելը...
Գրոն չէր ընդհատում: Բակունցը ստիպված էր պատմել պատահածն իր բոլոր մանրամասներով: Եվ միայն վերջում, երբ ավելացրեց, թե կրակոցներից հետո իրեն է մոտեցել Սարգիս Այվազյանը և խնդրել հանդես գալ իբրև վկա, քննիչը հարցրեց.
- Ձեզ հայտնի՞ է որևէ գրություն կամ նամակ, որ Չարենցը հասցեագրած լինի օրիորդ Այվազյանին:
- Ոչ: Նա ինձ այդպիսի բան չի ասել: Ոչինչ չգիտեմ...
Հարցաքննությունը երկար չտևեց: Եվս մի քանի աննշան դրվագներ ճշտելուց հետո Գրոն վկային ասաց, որ նա ազատ է:
- Իսկ Չարենցի հետ տեսակցել կարո՞ղ ենք,- հարցրեց Բակունցը:
- Առայժմ պիտի սպասեք: Ձեզ այդ մասին կտեղեկացնեն:
Բակունցը դուրս եկավ մռայլ ու անհոժար: Արթուն անցկացրած գիշերից հետո նա հույս ուներ, թե լույսը բացվելու հետ գոնե ինչ-որ բան առավել կամ նվազ չափով որոշակի

կդառնար: Իսկ այժմ, խնդրեմ, դարձյալ ավելին չիմացավ, քան գիտեր: Նրա մռայլ կանխատեսումները ոչ միայն չէին փարատվել, այլև հայտնի չէր, թե ինչ խմորից էր հունցվելու դրանց ելքը: Նոր միայն զգաց, որ ի բնե ամուր ջղերը տեղի էին տալիս: «Ախ, Չարենց, Չարենց, քո լցրած ցեխաջրից ո՞նց ես դուրս գալու»,- սրտնեղեց նա ու քայլեց՝ ինքն էլ չիմանալով՝ բա՞կ էր իջնելու, թե՞ նորից պիտի տեղ գտներ պատի տակ շարված աթոռների վրա՝ ապավինելով ոչ այն է՝ առկախ դիպվածին, ոչ այն է՝ նոթոտ այդ հսկիչների բարեհաճանքին…
Երբ Բակունցն իր ետևից փակեց քրեական բաժնի դուռը, Գրոն հավաքեց թղթերը, կապեց թղթապանակը, ապա ձայն տվեց հերթապահ միլիցիոներին և ասաց.
- Կառքը կանչիր: Գնում ենք հիվանդանոց:
Նրան վաղուց հավատից հանել էր իր գործի ձանձիր կարգը՝ ամեն դեպքի հետ նույն շարակարգով հոլովվող հոգսեր, մրոտվող թղթեր, թվարկվող հարցեր... Իսկ վաղը դարձյալ կկրկնվեր ելումուտի այդ տրորված ճանապարհը՝ աննշան այն տարբերությամբ, որ լսելու էր մի նոր դժբախտի անուն-ազգանուն: Սակայն այս մեկը կարծես թե տարբեր էր նախորդներից: Նա արդեն կռահում էր, նա զգում էր, որ իր վարույթին հանձնված գործը իրադարձություն կոչվելու բոլոր հիմքերն ուներ: Եվ բացահայտ փութաջանության այդ ալիքը, որից քշվում էր հիմա, այլևս ոչնչից ծնված հոսանք չէր, այլ պատեհ առիթ, որպեսզի նա փայլեր իր ողջ կարողությամբ: ‘Դեռ կտեսնեն, թե ով է Գրոն,’- մտածում էր նա, մինչ երկտեղ կառքն արշավում էր քունը թոթափած քաղաքի միջով:
Երկրորդ հիվանդանոցի վիրաբուժական բաժնում քննիչի գալուն սպասում էին: Հիվանդասենյակ մտնելուց առաջ բժիշկը Գրոյին ասաց.
- Գիշերն ենք վիրահատել: Նա հիմա թույլ է և նրան հուզվել չի կարելի: Պիտի Ձեզ խնդրեմ՝ որքան հնարավոր է, երկար չմնալ:
Ուսերին նետելով ճերմակ խալաթը՝ Գրոն ներս գնաց: Մահճակալի մոտ հավաքված կանայք նրան տեսնելուն պես ոտքի կանգնեցին: Բուժքույրը մնաց, մյուսները դուրս եկան: Գլուխը՝ բարձին, Մարիանան միայն մի պահ նայեց անծանոթ տղամարդուն ու իսկույն խոնարհեց դեմքը: Սակայն քննիչը ձևացրեց, թե չէր տեսնում աղջկա այտերին սահող ստվերն ու զսպված շրթունքների սեղմումը: Ազատված աթոռներից մեկն առաջ բերելով՝ նա հարմար նստեց, հանեց թղթերը և գործին հմուտ արհեստավորի անկիրք շարժումներով սկսեց նշումներ անել էջի անկյունում: Չէր շտապում: Իբրև մի փաստարկ, որից խուսափելն անհնար էր, Գրոն այժմ մատուցում էր իր անձը երկար ծիսակարգի հետ՝ ըմբոշխնելով շուրջը մակարդվող լարումը: Վերջապես գրիչը վայր դրեց, սպառված եռանդի անապատներից զննող հայացքով չափեց սենյակի պատերն ու սկսեց խոսեց այնպես, ինչպես երեցը շարակնոց կասեր.
- Ես հասկանում եմ Ձեր ապրումները և գիտեմ, որ հեշտ չէ վերհիշել պատահածը: Բայց, ցավոք, կարգը դա է պահանջում, ի՞նչ կարող ենք անել,- նա ձգեց վերջին բառերը:- Խոստանում եմ, որ մեր զրույցը կարճ կտևի: Դուք միայն փորձեք ժողովել մտքերն ու պատասխանել իմ մի քանի հարցերին:
Աղջիկը գլուխը շարժեց լռին հնազանդությամբ: Կասի ամեն ինչ: Ավելին կասի: Ահա մեկը, ով կպատժի նրան: Այս մարդը չի տրտնջա, մյուսների պես մխիթարանքի բառեր չի կրկնի,

այլ կանի հենց այնպես, ինչպես ինքն է ուզում: Իսկ իր ցանկությունը մեկն է՝ ցավ պատճառել նրան, իմանալ, որ նա էլ է տանջվում և թեկուզ այդքանով առնել իր անպատվության ու ամոթի վրեժը... Մարիանան զգում էր, որ համարձակությունն ուր որ է՝ կլքի իրեն: Խռով մանկան պես վերմակով գլուխը ծածկել ու լաց լինել էր ուզում: Բայց զսպեց կոկորդը ճնշող մղձուկը և ասաց հազիվ լսելի ձայնով.
- Հարցրեք...
Գրոն գիտեր հապճեպությունը կարճ դադարով վարագուրելու նրբին արվեստը: Մինչ Մարիանան կփորձեր վերագտնել հանգստության անհրաժեշտ ջիղը, նա մի անգամ էլ ուշադիր նայեց ձեռքի դատարկ թղթին ու միայն հետո դեմքը դարձրեց դեպի հիվանդը.
- Առաջին հերթին կուզեի իմանալ, թե նախքան դեպքը Ձեզ որևէ բան հայտնի՞ է եղել Չարենցի մտադրության մասին:
- Այո, ինձ որոշ բաներ արդեն ասել էին ընկերուհիներս՝ Մանուկյան Արաքսյան և Վարդապետյան Անահիտը: Սրանից երեք օր առաջ նրանք եկան մեր տուն: Նստեցին, սկսեցինք զրուցել: Նրանք ասացին, որ Չարենցը ցանկանում է ինձ հետ տեսակցել: Ասացին, թե իբր առանց ճանաչելու ինձ պոեմ է նվիրել, ոտանավորներ է գրել և ցանկություն ունի անպայման ծանոթանալ: Ես նրանց պատասխանեցի, որ կխորհրդակցեմ մորս հետ ու հետո կասեմ: Այդ ժամանակ նրանք ինձ զգուշացրին, որ Չարենցը որոշ չափով խուլիգան տիպ է, և ես պիտի այնքան էլ չհրապուրվեմ նրա համբավով: Դրանից հետո նրանք նորից եկան մեր տուն, այս անգամ խնդրեցին ցած իջնել: Գնացի ու տեսա, որ ներքևում սպասում էին Ստյոպա Մանուկյանը, Արուտչյանը և Չարենցը: Այնտեղ ինձ ծանոթացրին Չարենցի հետ, բայց այդ ամբողջ խոսակցության ժամանակ մենք ոչ մի բառ չփոխանակեցինք...
Մարիանան լռեց, ձգվեց վերմակի տակ ու անկյունում կանգնած բուժքրոջից ջուր խնդրեց: Քննիչը տեսավ, թե բաժակը բռնած նրա մատներն ինչպես էին տենդագին դողում: Հիշեց, որ ճիշտ այդպես ցնցվում էր նաև աղջկա հոր ձեռքը: ‘Սա արդեն վախ չի, այլ չարություն, պիտի որ չարացած սիրտն այսպես մարմինը ցնցի’,- որոշեց նա իր մտքում, սակայն չընդհատեց զրույցը.
- Շարունակեք, խնդրեմ,- ասաց անմռունչ՝ գրչածայրը նույն կետի վրա պատրաստ պահած:
Աղջիկը նորից փոխեց դիրքը, ափով ետ տարավ ճակատին ընկած մազափունջը և համակերպված պատմեց այն բոլորն, ինչ կատարվել էր նախ՝ ակումբում, իսկ հետո՝ զբոսայգում: Բառերն այլևս հպատակ չէին ներքին սաստումին: Հուզմունքը պտղունց առ պտղունց թափվում էր նրա ձայնալարերի վրա՝ թողնելով մի հնք, որ կոտորակվում ու ցրիվ էր գալիս ամեն հնչյունի հետ: Նա կարծես նորից քայլ առ քայլ անցնում էր բուլվարի մթին ծառուղով՝ ականջը թիկունքից եկող ոտնաձայներին: Ահա այստեղից իրենք պիտի թեքվեին, ահա, արդեն առնում էր վտանգի հոտը, արդեն մարմինը պատվում էր պաղ քրտինքով.
- Ատրճանակի կրակոց լսվեց: Երկու անգամ: Առաջին անգամ ես ոչինչ չհասկացա, բայց երկրորդ կրակոցից հետո սոսկալի ցավ զգացի: Միայն թե ձայն չհանեցի. չէի ուզում հորս

վախեցնել: Այդ ժամանակ ետ դարձա, իսկ մեզնից մի քանի քայլ հեռու, ատրճանակը դեպի ինձ ուղղած՝ կանգնած էր Չարենցը...
Մարիանան դեմքն ափերով ծածկեց ու հեկեկաց: Հիշողությունից արթնացած վախը խարվածքի նման հպվել էր սրտին, և նա լալիս էր ինքն իր մեջ՝ վատ բան արածի մեղավորությամբ:
Արցունքն իզուր էր: Քննիչը քորեց ծնոտն ու հարցրեց նույն համառությամբ.
- Իսկ Դուք այս ընթացքում Չարենցից որևէ երկտող, նամակ, գրություն չէի՞ք ստանում:
- Ոչ: Նա ինձ ոչ մի նամակ չի գրել...
Մարիանան սրբեց աչքերն ու հանկարծ մտածեց, որ սա արդեն սովորական հարց չէր, այս մեկն ասես երկմիտ ակնարկ լիներ՝ թափանցիկ կասկածի շղարշով: Չլինի՞ կարծում են, թե ինքն էլ մեղքի իր բաժինն ունի, կամ կարող էր հրապուրվել Չարենցով: Քավ լիցի, նման բան երբեք չի եղել: Եվ ինքը հիմա, հատկապես հիմա կուզեր քննիչին ասել, որ այդ Չարենցը բոլորովին էլ իր սրտով չէ, որ նա տգեղ է ու ցածրահասակ, որ սոսկալի հայացք ունի, որ 13 տարով մեծ է իրենից: Ինչու՞ պիտի նրանով տարվի ու նրան հավատա, ի՞նչ կարիք կա լինել նախ՝ սիրված, իսկ հետո՝ լքված: Չէ՞ որ Չարենցի մասին բոլորը հենց միայն դա են ասում: Ու որ նա սնապարծ կնամոլ է և ամբարտավան, որ երես է դարձնում կանանցից ավելի արագ, քան հասցնում է հերթական զոհի անունն իմանալ... Թող հարցնեն իրեն, նա դրանք էլ կասի...
Սակայն Գրոյին այլևս ոչինչ հետաքրքիր չէր: Նա վեր կացավ տեղից, հապճեպ հրաժեշտ տվեց ու, տեսնելով դռների մոտ սպասող միլիցիոներին, ասաց.
- Այս մեկն էլ վերջացրի: Գնանք բաժանմունք...

* * *

Վաղ առավոտյան մեկուսարանի երկու բնակիչներին՝ բազմակի ամուսին Եղիշեին ու տարեց կալանավորին ուղղիչ տուն տարան: Չարենցը հայացքով հրաժեշտ տվեց նրանց, ապա նստեց տախտակամածի եզրին ու հարցրեց դռան մոտ կանգնած երիտասարդին.
- Անունդ ի՞նչ է:
- Եփրեմ,- ասաց տղան և մնաց տեղում կանգնած:
- Ծխախոտ ունե՞ս, Եփրեմ: Իմը վերջացավ:
Սա գրպանից հանեց էժանագին ծխախոտատուփն ու պարզեց Չարենցին.
- Վերցրեք ամբողջը: Երևի այսօր ինձ էլ կտանեն:
Չարենցը տուփից դուրս քաշեց գլանակն ու լուցկին վառեց:
- Գիտե՞ս, թե ես ով եմ, - հարցրեց նա:
- Գիտեմ,- ասաց Եփրեմը,- Չարենցն եք: Իսկ ինձ երևի չեք հիշում, ես բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի որդին եմ:
- Իսկապե՞ս,- զարմացավ Չարենցը:- Հայրդ շատ պատվական մարդ է: Իսկ քեզ ինչու՞ են այստեղ բերել:
Երիտասարդը մեղավոր ժպտաց.
- Յուրացման համար:

Չարենցը զղջաց, որ նրան հարցրեց այդ մասին: Ու՞մ էր հաճելի սեփական մեղքն առաջին պատահածին խոստովանելը: Եվ այդ ի՞նչ անխոհեմ հակում էր ձանձրույթ ցրելու համար մարդուց պատմություն կորզելը: Նա տեղում անհանգիստ շուռումուռ եկավ և հետո, իբրև իր անզգույշ խոսքի միակ հատուցում, Եփրեմին ասաց.
- Մի բան էլ ես էի ուզում յուրացնել:
Մինչ տարակուսած տղան կփորձեր հասկանալ նրան, խցի երկաթյա դուռը բացվեց ու շեմքից վերակացուն ձայն տվեց.
- Կարող եք լվացվելու գնալ:
Դուրս եկան, գնացին մինչև միջանցքի ծայրը, միակ ծորակից հերթով պաղ ջուրը շփեցին իրենց դեմքերին ու վերադարձան: Հետո նրանց նախաճաշ բերեցին: Չարենցը վերցրեց քերված պռունկով իր ափսեն, շուռումուռ տվեց սեղանի վրա ու հրեց մի կողմ: Մնվելը նրան թվաց անախորժ ու տհաճ վարմունք, քաղցը՝ չարտոնված զանցանք: Ուտել, այսինքն՝ նախ՝ երկար ծամել այդ թանձր զանգվածը, ապա՝ կլանել ու հագենալով՝ մարմնի լիություն վաստակել, որպեսզի չհյուծվեր իր նմանը, որպեսզի պատիժն առներ ոչ թե սովալլուկը, այլ կուշտը...
Խառնակ մտքերից փրկություն չկար, և Չարենցն ուրիշ միջոց չգտավ, քան ծխելն ու քայլելը՝ դռնից դեպի պատը, պատից դեպի դուռը: Որոշ ժամանակ նա այդպես անխոտոր անցուդարձ էր անում՝ նայելով, թե Եփրեմն ինչպես էր խփում գդալն ափսեի պղտոր հատակին, մինչև որ հոգնեց ու նորից մեկնվեց տախտակամածին: Անշարժության մեջ դեռ կարելի էր սևեռվել որևէ կետի ու հավատալ, որ եթե մարմինը չէր տատանվում, գուցե թե միտքն էլ դադարեր ճոճվել վարանոտ թելերի վրա:
Բայց ցանկալի հաշտեցումը չեղավ: Նույնիսկ չփորձեց անհանգստություն ու վիշտ պատճենել դեմքի վրա, որ ազատեր հայացքը քրքումի պես դեղին համակերպումից: Պարզապես խխունջի պես ներքաշվեց, կծկվեց խեցու պահպանիչ գալարների մեջ ու մնաց այդպես՝ կշռույթից ազատ: Եվ երբ քիչ անց ականջին հասավ փականը ճանկռոտող բանալու ձայնը, կարծեց, որ դա ոչ թե դուռն էր բացվում, այլ մեկը կոտրել էր ուզում հազարակողպ այն տուփը, որտեղ գաղտնիք կար պահված:
Եկողն այս անգամ հերթապահ միլիցիոներն էր: Նա ներս նայեց ու ասաց Չարենցին.
- Դուք տեսակցության իրավունք ունեք: Եկեք իմ ետևից...
Փոքրիկ սենյակ էր՝ բանտախցի նման: Նստած էին Բակունցը, Մահարին ու Արմենը: Գրկախառնվեցին վաղուց բաժանված հարազատների պես:
- Ի՞նչ կա,- հարցրեց Չարենցը՝ տեղավորվելով նրանց մեջտեղում:- Ի՞նչ են խոսում քաղաքում:
- Ինքդ կռահիր երեք անգամից,- ասաց Մահարին:
- Իսկ որ ճիշտը կուզես՝ վիճակդ իրոք բարդ է,- նախաբանները մի կողմ թողնելով՝ խոսեց Բակունցը:- Հիմա պետք է մտածել, թե ի՞նչ ենք անելու: Ում հետ դու հույսեր ես կապում, նրանք ձեռքերը կլվանան ու մի կողմ կքաշվեն: Ոչ ոք քեզ չի օգնի:
- Ասոցիացիայում արդեն ցնծության մեջ են,- առաջ հրվեց Մահարին:- Որքան գիտեմ, որոշել են մոտ օրերս հավաքվել ու միավորման հարցն արագ լուծել:

- Միշտ էլ այդպես է,- Չարենցը տրորեց քունքերը,- եզը որ ընկավ, դանակավորները կշատանան: Իսկ ծխախոտ բերե՞լ եք:
Արմենը պարզեց ձեռքի փաթեթը: Չարենցը վերցրեց, տնտղեց, հետո դնելով ծնկներին՝ ասաց.
- Ինչ լինելու է՝ այն էլ կլինի: Թշվառներին մխիթարանք, մեղավորներին՝ պատիժ: Որևէ մեկի ներողամտությունը հայցել չեմ պատրաստվում:
- Ես դա չասացի,- ընդհատեց նրան Բակունցը,- ուղղակի կարիք չկա, որ ծանրացնես առանց այդ էլ ծանր վիճակդ: Կան բաներ, որոնք, ուզես թե չուզես, ստիպված կլինես անել: Մի մոռացիր, դու կուսակցական ես, Կենտգործկոմի անդամ: Բացատրվել է պետք...
- Ու ինչպե՞ս պիտի բացատրվեմ նրանց հետ, նորի՞ց կրակեմ,- հեգնեց Չարենցը:
- Չգիտեմ,- ասաց Բակունցը,- բայց քո հանգստությունն ինձ արդեն զայրացնում է:
- Ե՞ս եմ հանգիստը: Այ թե բառ գտար:
Լռեցին: Անախորժ դադար էր: Թուխպը ցրելու համար Արմենը ձեռքը գրպանը տարավ, հանեց այնտեղից չափածո նամակն ու պարզեց Չարենցին.
- Սա քեզ համար է:
Չարենցը վերցրեց, բացեց, արագ աչքի անցկացրեց ու հանկարծ այնպես շփոթվեց, որ սկսեց ջղաձիգ շարժումներով թուղթն ափերի մեջ տարուբերել, կարծես ձեռքում շիկացած թիթեղ էր բռնել ու չգիտեր՝ մի կո՞ղմ նետեր այն, թե՞ պահեր՝ մատներն այրելու գնով: «Սա ի՞նչ անմիտ նվիրվածություն է,- մտածում էր Չարենցը,- սա ի՞նչ կույր վստահություն է, որից խնկարկման հոտ է փչում: Տես, թե արատներն ինչպես են դառնում արժանիքի հավելված, հանցանքն ինչպես է դափնեպսակով զօծվում: Իսկ ես երևի գոհ պիտի լինեի, երևի տղան հիմա իմ գովասանքին է սպասում: Այնինչ չի էլ իմանա, որ հենց նոր մի բուռ աղ ցանեց բացված վերքիս վրա... Ասե՞մ նրան, թե ինչ խեղճություն է ողբերգության մեջ վեհություն փնտրելը ու ինչ ցավալի մոլորություն է, երբ մեղսությունն առաքինություն են կոչում»:
Լուռ վեճ կար: Մեծ հոգսը թողած՝ աննշմարը նշմարելու անհեթեթությունը կար: Ի վերջո նա վճռեց, որ ոչինչ էլ չի ասի, ետ վերադարձրեց նամակն ու հարցրեց Արմենին.
- Կարո՞ղ ես ինձ համար Սերվանտեսի «Դոն Կիխոտը» բերել:
Ինչու՞ հատկապես դա խնդրեց: Եթե հարցնեին, հազիվ թե պատասխան գտներ: Բայց և այնպես, զվարճալի կլիներ, եթե նրանք մտածեին, թե ինքն ընդհանրություն էր փնտրել դրա մեջ: Չէ, այս անգամ հաստատ ոչինչ չէր ստացվի: Ոչ ինքն էր նման այն խրոխտ, սպառազեն հիդալգոյին, ոչ էլ իր արարքն էր ասպետին վայել: Մինչդեռ որքան գեղեցիկ պատմություն կարող էր ուրվագծվել՝ «Նա կոտրեց պարզած տեգը հողմաղացների թևերի վրա...»: Ինչ հրաշալի այլաբանություն...
Տեսակցությունը կարճ տևեց: Ընկերների գնալուց հետո Չարենցին դարձյալ մեկուսարան տարան: Իսկ կեսօրից անց Եփրեմին տեղափոխեցին ուղղիչ տուն: Երբ դուռը նրա ետևից փակվեց, դատարկված խուցն ավելի նեղ ու հեղձուկ դարձավ: Ասես ոչ ոք երբեք էլ չէր եղել, ասես հաշված ժամեր առաջ չէր, երբ այստեղ եկավ ու տեսավ նրանց կերպարանքներն այդ անձավում, այլ թեթև մի ծուխ էր, որ ցնդեց, վերացավ, պատրանք էր, որն ինքն էր հորինել: Եվ ծանր գիշերից հետո առաջին անգամ Չարենցը զգաց, որ միայն մի բան, եզակի մի շունչ,

անհոլով մի հետք կար ներսում, ու նա եղել էր այստեղ իրենից առաջ, ու նրան ոչ ոք հեռացնել չէր կարող, ու չէր վոնդի, ու չէր արտաքսի: Մենակությունն էր: Այդ ածխադեմ վարակը, այդ մոլեռանդն ու ցմահ բանտվածը, որ ենթակա չէր ոչ ժամանակին, ոչ իր թախանձին, նա խցում էր և լինելու էր անդադար՝ սերտաճած պատերին ու առաստաղին, լցված իր երակների ու երկաթադռան ճեղքերի մեջ, ճաղերին սովոր պատուհանի տակ, լույսի ու մթի փոփոխ եզրերին: Նա անկյունում կանգնած ժպտալու էր իրեն, իսկ հետո սպառնագին շարժելու էր մատը՝ ինչպես մտրակը, որ խոստանում էր խստորեն ձաղկել...
Չարենցը գլուխն առավ ափերի մեջ ու անշարժացավ: Մտքի խումհար էր: Մտքի հոգեդարձ: Ուշաբերության դառնահամ լույսը, որ գալիս էր հեռվից, առատաձեռն էր, բայց հաշվենկատ, անառարկելի էր, սակայն հանդուրժված: Քանի մոտենում էր, այնքան ավելի պարզորոշ էր դառնում նրա աչառու տեսքի ողորկ թրծվածքը, մրսող մերկության անհաճ հաշանքը: Եվ Չարենցը ճնշվում էր փորձություն հրող այդ գրգիռներից: Արդեն գիտեր՝ մարմինն ու սիրտը յուրային չէին: Իսկ մշուշը ցրվում էր՝ բացելով այն դեմքը, որ նենգել էր իր տեսիլքին: Նա հիմա հետքեր էր տեսնում, որ նման էին վերքից վտարված ցավի, տեսնում էր խութեր, որոնք անշարժ էին, և շոշափուկներ էր տեսնում, որ կառչում էին իրենից փախչող հանդգնությանը: Խաղն ավարտվել էր, և ինքն արդար չէր: Պաղ ողջախոհության սահմանի վրա կանգ էր առել ժամանակը՝ ժամը հատուցումի... Բակունցն իրավացի էր: Անհաստատ էր կամակորելու ծեփը: Ոչինչ չանելը չափից առավել էր անխոհեմ: Միայն միամիտը կհուսար, թե ինչ-որ մեկին դեռ կարող էր հուզել իր տվայտանքի ճշմարիտ գույնը: Միայն ցնորվածին կթվար այնպես, թե մեղքից մինչև անմեղությունը կես քայլ էլ չկար: Սուտ էր, պատրանք էր ողջը, անմարմին մտագարություն էր, քանի որ միակ հավաստին ու իրականը դարձյալ այդ պատժախուցն էր, իր մենակությունը և այն սպասումը, որ երբեք լիովին չէր հատուցվի:
Չարենցը վեր կացավ, մոտեցավ դռանն ու սկսեց բռունցքով ծեծել երկաթը: Մյուս կողմից լսվեց վերակացուի զայրացած ձայնը.
- Ի՞նչ ես աղմկում:
- Ասեք, որ թուղթ ու գրիչ եմ ուզում:
Դրսից պատասխան չեղավ: Ոտնաձայները հեռացան: Սակայն քիչ անց հսկիչը վերադարձավ՝ բերելով մատիտ ու տետրից պոկված մի քանի էջեր: Չարենցը վերցրեց դրանք, հարմար տեղ ընտրեց սեղանի առջև ու ծխախոտ հանեց: Երկար տրորում էր չոր գլանակը պարապ ափերի մեջ, մինչև որ կրակը մոտեցրեց ու աչքերը փակ՝ ներս քաշեց ծուխը: Կծվահամ մուլը կոկորդն այրելով հոսեց, ետ եկավ ու կախվեց շուրթերից: Գրել: Իհարկե, գրել: Միայն թե ու՞մ և ինչի՞ մասին: Տատամսած միտքն աղքատի ամբարն ընկած մկան պես աղուն էր փնտրում: Մատները տրորում էին թղթի եզրերը: Հիմա ասելիքն ի մի կբերեր: Հիմա կգրեր: Դժվարը դա չէր: Դժվարն իր կասկածն էր, որ քորոցի պես ծակում էր սիրտը, կապանքի պես ձեռքերն էր զսպում: Իսկ եթե վաղը զղջա՞ր: Իսկ եթե պարզվեր, որ սխալ էր թույլ տվե՞լ...
Միառժամանակ նա այդպես տարված նստել էր՝ նայելով իր շուրջը ծանրացող ծխին: Ի վերջո մոխիրն անփույթ թափ տվեց ոտքերի տակ, դեմքն ազատեց կծկանքից ու սկսեց գրել.

«Հայաստանի Կոմունիստական Կուսակցության
Վերստուգիչ հանձնաժողովին
Այն ամենից հետո, որ տեղի ունեցավ, ինձ մնում է ասել ամբողջ ճշմարտությունը, հույս ունենալով, որ ընկերները կհավատան ու կհասկանան: Որպեսզի պարզ լինի ամբողջ պատմությունը՝ ես ստիպված եմ սկսել ոչ թե անմիջապես դեպքից, այլ դրան նախորդող իմ հոգեկան կացությունից- իմ քրեական արարքի այդ անմիջական աղբյուրից:
Վերջին ամսվա ընթացքում, կնոջս Լենինգրադ գնալուց հետո, ես գտնվում եմ հոգեկան ծայր աստիճանի գրգռված դրության մեջ. դրությունը բարդացավ նրանով, որ վերջերս ես սկսեցի տառապել խրոնիկական անքնությամբ: Սրան նպաստում էր մի շատ փոքրիկ հանգամանք, որ կարող է անհավատալի թվալ: Դա այն է, որ իմ ապրած բնակարանում էլեկտրական լույս չլինելու պատճառով ես ստիպված էի քնել մութ սենյակում- մի բան, որը ինձ շատ գրգռում է ու վախեցնում: Նյարդային նման գրգռված կացությունը երևի առաջացրեց իմ մեջ վախ մենակությունից. ես վախենում էի մենակ մնալ, ես խնդրում էի ընկերներիս, որպեսզի քնեն ինձ հետ միասին: Գիշերվա ընթացքում բնակարանում հնչող յուրաքանչյուր ձայն ինձ սարսափի էր մատնում: Այս ամենին գումարեք և այն, որ եթե ինձ հաջողվում էր քնել՝ այդ քունը անմիջապես փոխվում էր զարհուրելի զառանցանքի: Ամեն գիշեր, պարբերաբար, ես տեսնում էի միևնույն երազը. հազիվ էի աչքերս փակում, երբ հանկարծ թվում էր ինձ, թե իջնում էր երեսիս ծանր, խոնավ, կպչող մի թաթ. իջնում էր ու խեղդում: Այդ բոլորից մի ելք գտնելու համար ես սկսեցի պարբերաբար խմել. վերջին ամսվա ընթացքում ես խմում էի յուրաքանչյուր օր միջին հաշվով մի շիշ օղի:
Ես տեսնում և զգում էի, որ այս ամենը այսպես չի կարող շարունակվել, որ հոգեկան նման կացությունը կարող է վերջանալ ողբերգությամբ: Ես խնդրում էի իմ բոլոր ընկերներին, որ ինձ հնարավորություն տրվի գոնե մի ամսով գնալու ուրիշ տեղ. այդ մասին հայտնեցի նաև ընկ. Աշոտ Հովհաննիսյանին, սակայն, դժբախտաբար, գնալու հնարավորություն չեղավ: Ահավասիկ այն ընդհանուր կացությունը, որի ֆոնի վրա առաջացավ այս պատմությունը…»:
Ձեռքը դադար առավ: Կարճ հապաղու՞մ էր, թե՞ միտքը շեղվեց: Չարենցը կարդաց արդեն գրվածը, և առաջին պահի հորդորը, որ համակեց նրան, թուղթը պատռելու անզուսպ ցանկությունն էր: Այդ ի՞նչ էր անում: Այդ ի՞նչ հուզախեղդ, լալկան տողեր էին, և ո՞վ պիտի ականջ կախեր դրանց: Ու եթե չափազանցված զգացմունքների ծուղակն էր ընկել, եթե չէր ազատվել պատրանք տեսնելու հակվածությունից, եթե անկեղծությունը չէր այն հնարքը, որով անաչառության դուռն են ծեծում, ապա ի՞նչ էր մնում իրեն՝ դե՞ն գցել այդ նամակը, գրողի ծո՞ցն ուղարկել ասված բառերի շեղջը:
Բայց չէ, սպասիր, կպչուն մտքերից այն կողմ ներհակ խմորումի բացիլն էր, ինչ-որ կարևոր բանի ափսոսանք կար, և Չարենցն իրեն հանցավոր չէր զգում այդրոպեական թուլության համար: Պետք էր գնալ մինչև վերջ, պետք էր վճարել մեղքի վերջնահաշիվն ու չսակարկել: Ուրեմն որոշված էր. ոչինչ չէր փոխելու: Լռության թիկունքում պահ մտնելու սովոր չէր, ջնջված կամ հավելված մի քանի բառից հրաշք չէր ծնվելու, և այս գիրն էլ թող գրվեր այնպես, ինչպես կգրվեր: Մնացյալի մասին արդեն նրանք՝ կարդացողները հոգ կտանեն: Չարենցը նորից խոնարհվեց սեղանի վրա: Շարունակել էր պետք.

«…Մարիանա Այվազյանին ես տեսա առաջին անգամ ընդամենը մի ամիս առաջ, և նա թողեց ինձ վրա անջնջելի տպավորություն:
Երկար դիմումներից հետո ընկերներից մեկը վերջապես ծանոթացրեց: Որպեսզի հասկանալի դառնա նրա իմ վրա թողած ազդեցության տարօրինակ արագությունը և թափը- հարկավոր է ի նկատի ունենալ, որ հոգեկան վերոհիշյալ կացության հետևանքով շատ չնչին բաներ ինձ համար երբեմն դառնում են идея фикс, навязчивая идея, бред,- մի հանգամանք, որի մասին կարող են վկայել իմ բոլոր ընկերները: Մեր ծանոթանալուց երկու օր հետո ես արդեն զգում էի, որ կորցնում եմ կամքս, հասնում եմ խելագարության: Ինձ հարկավոր էր հեռանալ Երևանից և հանգստանալ, ես այդ զգում էի ամբողջ էությամբ, բայց հնարավորություն չկար: Եվ ես հասկացա, որ հոգեկան այդ կացությունը չի կարող երկար տևել, որ մոտենում է վախճանը, որ հարկավոր է դիմել վճռական քայլերի: Նախ՝ ես տեսնվեցի Մարիանա Այվազյանի հետ և բացատրվեցի, սակայն նախքան այդ ես շատ լավ հասկանում էի, որ ոչինչ էլ դուրս չի գա դրանից, որ ես ընկնում եմ հիմարության մեջ, որ այդ ամբողջ պատմությունը զառանցանք է և ուրիշ ոչինչ:
Բայց և այնպես ես որոշեցի խոսել նրա հետ և երբ երկու րոպե տևող խոսակցությունից հետո ես հասկացա, թե ինչ ծիծաղելի դրության մեջ եմ ընկել, ինձ համար պարզ դարձավ, որ հարկավոր է դիմել ծայրահեղ միջոցի. ես որոշեցի գնալ տուն, վերցնել ատրճանակս և կես ժամ հետո սպանել նրան: Այդպես էլ արեցի: Չնայած որ ես երկու անգամ կրակեցի երկու քայլ հեռավորության վրա- բարեբախտաբար ձեռքս վրիպեց և նա ստացավ միմիայն մի անվնաս վերք: Ահավասիկ ամբողջը:
Այժմ ես արդեն իմ քրեական արարքով վերջ տվի իմ ամբողջ կյանքին, ամենահիմար և վայրենի ձևով խեղաթյուրեցի այն- ինձ համար ոչ մի ելք չի մնացել: Ես այս զգում և հասկանում եմ ավելի լավ, քան կարող է հասկանալ մի ուրիշը:
Քրեական արարքով ինքս ինձ դնելով կուսակցության շարքերից դուրս՝ պարզ է, որ ես չեմ կարող գտնել ուրիշ միջավայր, որ ինձ հարազատ լինի և բավարարի: Պարզ է, որ չկա վերադարձ. վերջ: Ենթադրենք, որ մի քանի ամիս կամ տարի բանտ նստելուց հետո մի օր դուրս գամ, ինչ պիտի անեմ. ես չեմ պատկերացնում այդ վայրկյանը: Я живу еще физически- но я уже труп. Я чувствую свое разложение. Я с ума схожу. Եվ այժմ ես միայն մի խնդիրք ունեմ ընկերներին՝ դատել որքան կարելի է ինձ խիստ և եթե կարելի է դատապարտվել մահվան: Դա ամենալավ ելքը կլիներ թե ինձ համար, թե ընկերների: Расстрелян за маузеризм. Ведь это формальный маузеризм.-
Այսքանը:
Եղիշե Չարենց
1926. 6. 9, Երևան, Միլիցիայի բանտում»:
Ավարտեց: Նայեց մանրատառ գրվածքին ու խորը շունչ քաշեց: Ամեն բան տեղին էր ու ազնիվ: Ճիշտ է, ստացվեց ոչ այնպես, ինչպես կարգն էր պահանջում: Թերևս փոքր-ինչ հուզական էր, մի քիչ դառնացած, իր անձի հանդեպ՝ անզիջում: Բայց հազիվ թե դրանից արատը պակաս արատավոր դառնար, նախատինքը՝ դրվատանք:
Չարենցը ծալեց էջերն ու հանկարծ անբացատրելի մի թեթևություն զգաց: Այն միտքը, որ ինքը հիմա փակված դռներից ու ճաղերից այս կողմ անմատչելի էր դրսի աշխարհին, նրան

պարուրեց գայթակղիչ հայտնության ներշնչումով: Ինքն այդ աշխարհի բացական էր: Եվ նույնիսկ իր բախտը տնօրինելու բեռն էր ցած բերվել ուսերից: Եվ բծախնդիր լինելու պատճառ այլևս չուներ: Եվ չկար անսխալության կնիք կրելու անհրաժեշտությունը:
Նա տնտղեց իր շուրջը, ինչպես կնայեր մի գոց, ինքնամփոփ անջրպետի ներսը, ու ասաց հազիվ լսելի ձայնով.
- Փորձանքի մեջ ես, երիտասարդ, փորձանքի մեջ...

* * *

Չարենցի նամակը հանձնեցին ժողքննիչ Գրոյին, և նա նույն օրը ծրարն ուղարկեց Կենտկոմ: Հետո մինչ ուշ երեկո նստեց աշխատասենյակում, մեկ առ մեկ նայեց բոլոր թղթերը, դրանք խնամքով կարեց թղթապանակի մեջ, բայց այդպես էլ էական ոչինչ չձեռնարկեց: Շտապելու պատճառ չուներ: Դեռ առավոտյան նա փութաջան էր, ինչպես երբեք: Իսկ հիմա նրանից միայն պահանջվում էր կաշկանդվել իր խոհեմությամբ ու սպանել օրվա վերջին ժամերը: Քամին փոխել էր ուղղությունը: Չարենցն ակամա ծառայություն էր մատուցել նրան՝ նամակ գրելով, ազատել էր Գրոյին կռահումների ու կասկածների ավելորդ բեռից: Եվ քննիչը գոհ էր: Կսպասեր այնքան, մինչև կստանար Կենտկոմի կարգադրությունը, իսկ այնուհետև ամեն բան կաներ համաձայն վերին հրահանգի: Ոչ մի սխալ: Ոչ մի վրիպում: Ոչ մի ինքնագործունեություն:
Նոր վկաների հարցաքննությունը սառեցրեց.
- Ասեք՝ թող վաղը գան,- կարգադրեց բաժնի ծառայողին առարկություն չընդունող ձայնով:
Պատեհությունը բարի գիշեր էր խոստանում նրան, և տուն գնալիս քննիչն այլևս չէր մտածում երկար ու հոգնեցուցիչ օրվա մասին:
Հաջորդ առավոտ շենք մտնելուն պես նա հերթապահին ասաց.
- Երբ փոստը կբերեն՝ ինձ անմիջապես տեղեկացրեք:
Սպասված փաթեթը Գրոյին հանձնեցին կեսօրից հետո: Թղթակցության մեջ զմուռսով կնքված երկու ծրար կար: Անհամբերությամբ բացեց առաջինն ու ոտքի վրա սկսեց կարդալ: Նամակում ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի նախագահության նիստի արձանագրությունն ու կայացրած որոշումն էր: Այնտեղ ասվում էր.
«Լսեցին- Ընկ. Եղիշե Չարենցի հարցը, հրատարակչական բջջից, ծնված 1897 թ., սոց. ծագումը՝ գյուղացի, սոց. դրությունը՝ ծառայող, կուսակցության անդամ 1920 թ., կրթությունը՝ միջնակարգ, պրոլետգրող:
Մեղադրվում է պասսիվության (տես բջջի 31-ի օգոստ. թիվ 56 արձ.), կուսակցությունը վարկաբեկելու, իդիոլոգիապես լքված լինելու և մահափորձ կատարելու մեջ (զեկ. ընկ. ընկ. Ա. Շահգելդյան, Կոստանյան, Կուզնեցով, Քարամյան, Տատյան, Դոստակյան):
Որոշեցին- ա) Հեռացնել կուս. շարքերից բարոյալքվածության, իդեոլոգիապես երերուն և չձևակերպված լինելու, ոչ կոմունիստական արարքների և մահափորձ կատարելու համար:
բ) Խնդրել Կ. Վ. հանձնաժողովին հաստատելու:
Գ) Որոշումը մասսայականացնել պարբերականի միջոցով»:

Երկրորդ ծրարը ՀԿ(բ)Կ Վերստուգիչ հանձնաժողովից էր: Դարձյալ որոշում: Պարզ էր, որ քննարկումն այնտեղ էլ բեղուն հունձք էր ունեցել: Ինչպես և սպասվում էր, երկու նամակների համերաշխությունն աչքի էր զարնում՝ թե նախաբանն էր նախորդ գրության կրկնությունը, թե պարսավանքի ոճն էր անփոփոխ: Այդ պատճառով էլ սկիզբը բաց թողնելով, Գրոն կարդաց միայն վերջին հատվածը՝ ակնապիշ հայացքը դժվարությամբ կտրելով յուրաքանչյուր բառից.

«...Չարենցը դիմում է գրում ՀԿ(բ)Կ ԿՎՀ, որով ընդունում է իր մեղքը, խնդրում ենթարկել իրեն պատասխանատվության: Երևանի կոմիտեն քննարկել է Չարենցի արարքը, որոշել է նրան հեռացնել կոմկուսի շարքերից:

Որոշեցին.- ա) Արձանագրել, որ նշված արարքով Չարենցը իրեն դուրս է դրել կուսակցության շարքերից:

բ) Հանձնարարել դատախազությանը Չարենցին ենթարկել դատական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով:

գ) Սույն որոշումը հրապարակել մամուլում»:

- Ահա և ամբողջը,- կուտածո թուքը կուլ տվեց Գրոն ու նամակները գրպանը դրեց:- Սա էլ ինձ պետք էր: Ոչ մի առանձնահատուկ մոտեցում չի պահանջվում: Հետևապես, ինչպես այստեղ է ասված, ամեն բան կարվի ընդհանուր հիմունքներով:

Նա երկար ճոճվեց աթոռի վրա, շուռումուռ տվեց սեղանի գրչատուփերը և միայն հետո կանչեց հերթապահին ու նրան հարցրեց, թե վկաները եկե՞լ են:

- Այո, սպասում են:

- Հերթով ներս կանչիր:

Արաքսյա Մանուկյանը հարցաքննության էր ներկայացել տեսության մեկնող պչրուհու դյուրահաճությամբ: Շքեղ գլխարկը, ծնկները ծածկող աշնանային բաց զգեստի փայլը և ձեռքին բռնած փոքրիկ պայուսակը կարծես հատկապես ընտրված էին նրա համար, որ սեթևեթող տիկնոջ փոխարեն աղաղակեին. «Շատ ցավալի բան է կատարվել: Բայց ես անմեղ եմ...»: Նա զայրացած էր Չարենցի վրա: Գրոն դա նկատեց հենց սկզբից: «Սա առանց իմ օգնության էլ ամեն ինչ կասի»,- մտածեց նա ու մոտ գնալով՝ աթոռ մատուցեց:

Քննիչի առաջին հարցը կարծես մեկնարկի հրահանգ լիներ: Արաքսյան հերթով պատմեց բոլորը՝ և Մարիանային փողոց կանչելու, և իրենց տան հանդիպման, և Խորառծառի ակումբի, և չասված կենացի ու վեճերի մասին: Մինչ նա խոսում էր, նրա շպարված մաշկի տակ հուզմունքը հետքեր էր թողնում, հարթ ճակատը երբեմն ցնցվում էր ջղակծկումից և ակնաբիբերի կորագծերը սեղմվում էին ցավ զսպելու նման: Թվացյալ այն հույսը, թե իր բառերն անկեղծ պատումից հեռու չեն անցնի, նենգում էր նրան, և կոծկված սրդողանքը երես էր ելնում ջրասույզ արված տափաշշի պես:

Որքան էլ Արաքսյան ջանում էր վստահություն ներշնչել, վատնված եռանդի դիմաց նա առայժմ ոչինչ չէր ստացել, բացի այն բանի տագնապից, որ քաղաքում արդեն ամեն ինչ գիտեին: «Ինչպիսի ամոթ: Ինչ խայտառակություն»,- շրթունքներն էր կծոտում նա: Նրա համար անպատվաբեր էր հանձն առած միջնորդի դերը, մինչև նվաստացում հասնող իր հատուցումը Չարենցի պատճառով: Եվ եթե հոգու խորքում դեռ կարող էր ինքն իրեն խոստովանել, որ կատարվածի մեջ մեղքի սեփական բաժինն էլ կար, ապա ոչ մի գնով չէր

ցանկանա, որ նույնը մտածեին նաև ուրիշները: Բայց ինչպե՞ս կապանք դներ չարախոսության անոսկոր լեզվին, ինչպե՞ս հարկադրեր, որ բամբասանքի վայրի երամը չվեր իրենից հեռու: Ելքը սա էր ու վերջինը: Միայն այստեղ էր, որ գուցե դեռ հաջողվեր շտկել սխալը, այս միակ անգամն էր, որ արտոնվել էր բացառությունը: Եվ նայելով քննիչի աչքերին՝ Արաքսյան հիմա մտմտում էր, թե այդ ու՞ր կորավ կատվային բնազդից սերված իր անորսալի զգուշությունը, ու՞ր մնացին հմայքի ուժով սիրաշահումի ձիրքերը, կանացի քմայքների հետ ծածկաբար քայլող նկրտումների կպչուն ստվերները: Դուրս հանել էր պետք դրանց, բանեցնել էր պետք սպառված փաստարկների դիմաց, այժմ, հենց այս պահին:
- Չարենցի կինը ընկերուհիս է,- ասում էր նա Գրոյին:- Իսկական հրեշտակ: Ես չէի կարող հանգիստ խղճով նայել, թե այդ կնամոլն ինչպես է վարկաբեկում դժբախտ աղջկան: Ստիպված էի անել ամեն բան, որ Չարենցի ու Մարիանայի մտերմությունը չկայանար: Իսկ դրա համար միայն մի միջոց կար՝ հիասթափեցնել Չարենցին, որպեսզի ինքն իր կամքով այդ ամոթալի կապը խզեր: Ու եթե որևէ հարցում միջամտել եմ, ապա նպատակս ընդամենը սա է եղել, ուրիշ ոչինչ:- Արաքսյան մի թույլ թառանչ արձակեց ու ավելացրեց,- Ախ, եթե Չարենցին ճանաչեիք, կհասկանայիք, թե դա ինչպիսի հոգս է...
Գրոն լսում էր, ձևացնում էր, թե գրի է առնում նրա պատմածը և չէր ընդհատում: Գուցե դեռ բառերի հեղեղի միջից դուրս թռչեր մի այնպիսի միտք, որ պետք էր իրեն: Հայացքն՝ անփոփոխ, դիրքը՝ համակերպ, նա մի փոքր էլ սպասեց, և համոզվելով, որ կինն այլևս հետաքրքրական ոչինչ չէր հիշելու, ինքը հարցրեց.
- Որևէ բան կարո՞ղ եք հայտնել բուն դեպքի մասին:
- Թե այդ օրն ինչ է կատարվել, չգիտեմ,- ասաց Արաքսյան՝ ձայնին խառնելով մի քիչ ափսոսանք:- Ես հաջորդ օրը ամուսնուցս լսեցի մանրամասները: Բայց ուզում եմ Ձեզ տեղեկացնել, որ որոշել էի մեկ անգամ ևս Մարիանային մեր տուն հրավիրել՝ Չարենցից նրան վերջնականապես փրկելու համար:
Գրոն չհարցրեց, թե նա ինչպե՞ս էր պատրաստվում փրկել անմեղ աղջկան: Այն, ինչ չէր եղել, նրա համար դատարկ հնչյուն էր: Փակեց արձանագրության էջը, կնոջն ուղեկցեց մինչև դուռը և հերթապահին հայտնեց, որ կանչեն մյուս վկային:
Միքայել Արուտչյանն արդեն մեկ ժամ էր, ինչ բաժանմունքի միջանցքում քննիչի հրավերին էր սպասում: Նա սենյակ մտավ վեհերոտ քայլերով, նման մի մարդու, ով երբևէ չէր կարող պատկերացնել, թե մի օր կհարցաքննեին նաև իրեն: Միայն այստեղ կանչված լինելու միտքը բավական էր, որ նրան հուսահատության դուռը հասցներ: Եվ երբ Գրոն սկսեց խոսել Չարենցի մասին, Արուտչյանն այնպես շփոթվեց, կարծես հենց նոր նրան հայտնեցին իր գալու շարժառիթը: Գրոյին այլ բան չէր մնում, քան խուլ համբերությամբ հետևել նրա յուրաքանչյուր խոսքին, պատմության խճճված թելերի ծայրերը գտնել ու այնպես բռնել դրանք, որ դուրս չսահեին մատների միջից:
Ասենք, Արուտչյանն ինքն էլ հստակ չգիտեր՝ ի՞նչ էր իրենից պահանջվում: Այն կասկածը, որ անզգույշ խոսքով միգուցե վնասեր ընկերոջը, էլ ավելի էր սրում նրա շփերթ երկյուղը: Քննիչը հարց էր տալիս, քննիչն անվրդով տեսք ուներ, քննիչի աչքերը ձանձրույթից փակվում էին, իսկ Արուտչյանի համար ոչինչ հենց այնպես չէր կատարվում, նա գիտեր,

դրանք լարված ծուղակներ էին, իր պես դյուրահավատից պարսավող բառեր կորզելու հնարքներ: Այդ պատճառով էլ խոսում էր դանդաղ՝ կցմցելով մասնատված տողերը, չափուկշռույթը խախտելով՝ մեկ առ մեկ պատմում էր նախորդած օրերի բոլոր դեպքերը՝ ասես հիշողության պարկն էր քրքրում՝ վերջին հատիկն էլ գտնելու փույթով: Գրոն դրանք արդեն լսել էր մի քանի անգամ: Միակ հույսով, որ ավարտը հեռու չէ և ի նշան իր ամուր ջղերի, նա սղագրում էր պարտադիր պայման կատարողի նման՝ որոշ հատվածներ իսպառ դուրս թողնելով:
Իսկ Արուտչյանը դադար չէր առնում: Ծանրախոսի արտաշնչանքով նա այժմ եկել-հասել էր այն երեկոյին, երբ իրենց խմբով Խորառծառի ակումբ գնացին.
- Չարենցը բարկացավ, թե ինչու իրեն թույլ չտվինք խմելու Մարիանայի կենացը: Տաճատը սկսեց Չարենցին ձեռք առնել: Չարենցն էլ ասաց, որ Մարիանային կխփի: Տաճատը թե՝ չես կարող: Դրանից հետո չգիտեմ՝ խոսակցությունը ինչպես շարունակվեց, միայն այն տեսա, որ Չարենցը ստորագրություն տվեց Տաճատին վերջինիս բլոկնոտի վրա, թե Մարիանային վաղը խփելու է որպես շնիկի...
Քննիչը տեղում այնպես ցնցվեց, ինչպես ուշաթափ մեկը կսթափվեր՝ դեմքին ջրի պաղ շիթը զգալով.
- Ի՞նչ ասացիք,- առաջ մղվեց նա,- ասում եք՝ Չարենցը խփելու մասին ստորագրությու՞ն է տվել:
- Այո, ստորագրեց:
- Դուք դա տեսա՞ք:
- Բոլորն էլ տեսան:
- Հիմա որտե՞ղ է ծոցատետրը:
- Թութունջյանի մոտ: Նրա ծոցատետրն էր: Բայց նա այժմ քաղաքում չէ: Որքան ես գիտեմ, իր գործերով Նոր Բայազետ է մեկնել:
Սա նորություն էր: Գրոն հազիվ զսպեց հաճույքից ձեռքերը շփելու ցանկությունը: Միայն լեզվի տակ զեղված թուքը փոխադրեց խռչակի խորքերը, և հայացքը դարձավ նախկինի պես անզբաղ:
- Շատ լավ, շարունակեք,- ասաց նա, իսկ ինքն այլևս լսել չէր ուզում: Ու մինչ Արուտչյանը վերջին հանդիպման մանրամասներն էր փորձում հիշել, Գրոն շարժում էր գրիչն ու մտածում էր. ‘Վերջապես գտա: Հիմա որ ձեռքիցս չի պրծնի: Ինքն այս մասին ոչինչ չի ասել իր ցուցմունքներում, ոչինչ չէր գրել նամակի մեջ, իսկ ես դա գիտեմ: Ու թող այսքանից հետո ասեն, թե Չարենցի գործից դիտավորության հոտ չի գալիս...’:
Նա դեռ մի քիչ էլ ողորմածաբար ականջ դրեց վկային, հետո պահն ընտրելով՝ զգույշ ընդհատեց նրան ու պատրաստակամ ժպիտով հարցրեց.
- Ձեր պատմածներին ավելացնելու ուրիշ բան ունե՞ք:
- Ունեմ,- ասաց Արուտչյանը: Նա դեռ ջանում էր գտնել այն հավելուկը, որն իր կարծիքով կմեղմեր ձախորդ ընկերոջ մեղքի գույները:- Կուզեի նշել, որ Չարենցն ասում էր, թե Մարիանան իրեն պետք չէ, այլ նրան հարկավոր է այն տրամադրությունը, որը ստեղծվում է Մարիանայի կամ մի ուրիշ աղջկա միջոցով, ինչի շնորհիվ նա կարողանում է ստեղծագործել: Ես, անկեղծ ասած, հավատում էի ու հիմա էլ հավատում եմ դրան:

Արվեստագետը կհասկանա, թե խոսքն ինչի մասին է: Իրրև ապացույց, ասում էր (և ես էլ գիտեմ), որ նա մի նոր գիրք էր գրել այդ ամսվա ընթացքում և նպատակ ուներ այդ գիրքը նվիրել Մարիանային...
Գրոն սրանք ևս անփոփոխ գրառեց, թեև վերջին սրտաճմլիկ տողերը հազիվ թե ի զորու լինեին ինչ-որ բանի հետ սոսնձվել: Իսկ երբ նկարիչը գնաց, քննիչը փակեց դուռը, սեղանին լցրեց գործին առնչվող թղթերը, և այդ պահին էր, որ հանկարծ միտքը խայթվածի նման ետ ոստնեց անպատիր մի հայտնությունից: Նո՞ր միայն ծնվեց կսմթող այդ բառակույտը, թե այն իր հետ էր առաջին իսկ պահից, ոտնամանի մեջ ընկած քարի պես, որին որքան էլ փորձես մոռանալ, նա, միևնույն է, իր գոյությունը կհիշեցնի անախորժ ցավով: Ուրեմն մի լռիր, հարցրու այդ մասին: Չէ՞ որ այժմ մենակ ես, չէ՞ որ կարող ես գոնե ինքդ քեզ չգայթակղել ինքնախաբկանքով: Ինչպե՞ս պատահեց, որ հատկապես քեզ դիպվածն ընտրեց շատերի միջից: Եվ այդ բացառիկ վերաբերմունքին ի՞նչ անուն կտաս՝ բարեբախտությու՞ն, թե՞ դժբախտություն... Նստել ես ահա, էջեր ես մրոտում, փնտրում ես փաստարկներ, վկաներ, մեղքեր: Եվ այդ բոլորը՝ հանուն մի բանի՝ որ Չարենց պատժես... Որ Չարե՞նց պատժես…
Գրոյի դեմքն այլայլվեց իրեն պաշարած մտքից: Բայց դա կարճ տևեց: Հաջորդ պահին նա ձեռքը գրպանը տարավ, դուրս բերեց այնտեղից երկու ծրարներն ու ակնածանքով դրեց սեղանի վրա...